

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄՐԲԱԶԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՄԻԱՅԻ ՀՆԱԳՈՒՅՆ
ՀՈԳԵՎՈՐ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍՐԲԱԶԱՆ
ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ
ԱՌԱՋԱՎՈՐ ԱՄԻԱՅԻ
ՀՆԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ . 2000

ԳՅԷ 93/99
ԳՄԳ 63.3
Մ 917

Գիրքը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գրքի հրատարակության հովանավորն է հեղինակի սփյուռքահայ բարեկամ ՍԱՐԳԻՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԸ (Բեյրութ-Մոնրեալ)

Մ 917. Մովսիսյան Ա.

Սրբազան լեոնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում.- Ե.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000. 56 էջ

Գրքի շապիկին՝ շումերական կնքադրոշմի հատված և Անտիոքոս Ա Երվանդունու կառուցած սրբավայրը Նեմրոս լեռան վրա (Կոմմագենե)

0503020913
Մ _____ 2000
703(02)-2000

ԳՄԳ 63.3

ISBN 5-8080-0431-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000
© Մովսիսյան Ա., 2000

ՆԱԽԱԲԱՆ

*Աշակերտները հարցրեցին Հիտաին.
«Ասա մեզ, ինչպիսի՞ն կլինի մեր վերջը»։ Հիտան ասաց.
«Բացե՛լ էք դուք սկիզբը, որպեսզի վերջը որոնեք։
Քանզի որտեղ սկիզբն է, այնտեղ էլ վերջը կլինի»...*

Ավետարան ըստ Թովմասի (պարականոն)

Ինչպես ամեն մի անհատի, այնպես էլ ժողովուրդների կյանքում ճգնաժամերի հաղթահարումից հետո գալիս է մի պահ՝ կանգ առնելու, ինքնամփոփվելու, անցածը վերիմաստավորելու և ապագայի համար ուղենիշեր փնտրելու ու ճշտելու։ Գերխնդիր են դառնում հազարամյակներ առաջ ձևակերպված հարցադրումները, թե՛ «ո՞վ եմ ես, որտեղի՞ց եմ գալիս և ո՞ւր պիտի գնամ»:

Անցնող հարյուրամյակում հայ ժողովուրդը հաղթահարեց իր պատմության ամենատևական և ամենածանր ճգնաժամը՝ պետականության կոլլապսից, դարեր շարունակ մաքառելուց ու ցեղասպանության ենթարկվելուց հետո վերականգնելով անկախ պետականությունը: 1918թ. ստեղծված Հայաստանի Հանրապետությունը շատ կարճ կյանք ունեցավ: Ինքնապաշտպանական պատերազմները, սովի ու համաճարակների դեմ պայքարը պարզապես ժամանակ չտվեցին նշված հարցադրումներին անդրադառնալու: Խորհրդային Հայաստանում ևս չէին կարող պատասխան գտնել այդ հարցերին. արգելված էին կամ առնվազն չէին խրախուսվում ազգային զարթոնքի տանող բոլոր հնարավոր քայլերը: Սփյուռքում արվեցին քայլեր այդ ուղղությամբ, բայց Սփյուռքի գերխնդիրն, ի վերջո, աշխարհով մեկ ցրված հայության ազգապահպանումն էր: Եվ, թերևս, ներկա սերնդին է վիճակված այդ հարցադրումների պատասխանը ստանալու և դրանք ազգային գիտակցության աստիճանի բարձրացնելու ճակատագիրը, մանավանդ որ լրացուցիչ մտորումների առիթ են տալիս դարի ու հազարամյակի ավարտն ու նոր դարաշրջանում ազգի ապագայի խնդիրները:

Ներկայացվող աշխատանքը մեծ հավակնություններ չունի, այլ համեստ մի փորձ է՝ պատասխանելու ինքնաճանաչման հարցադրումներից երկուսին՝ ովքե՞ր էինք մենք ի սկզբանե և որտեղի՞ց ենք գալիս: Ինչպե՞ս է մեր երկիրը ներկայանում հին աշխարհի ժողովուրդների (որոնց մի մասը ժամանակի ընթացքում հեռացավ պատմության բատերաբեմից) դիցա-վիպական աշխարհընկալումներում, ո՞րն է նրա խորհուրդը, ովքե՞ր են եղել մեր նախնիները և ի՞նչ դեր են կատարել հին աշխարհում, ունեցե՞լ են արդյոք որևէ առաքելություն և եթե այո՝ ո՞րն է դա: Սրանք հարցեր են, որոնց պատասխանները դարերի բազմապիսի փորձությունների ընթացքում մեծ մասամբ կորցրեց մեր ժողովուրդը, բայց, ի բարեբախտություն մեզ, դրանց մասին տեղեկություններ են պահպանվել հին աշխարհի բազմաթիվ

գրավոր հիշատակարաններում, որոնց վերծանումն իրականացավ վերջին երկու դարերի ընթացքում:

Այս գրքույկով առաջին անգամ փորձ է արվում ի մի բերելու Հայաստանի մասին վաղիցից պատկերացումների առանձին դրվագները, որոնք պահպանվել են համաշխարհային (հատկապես արևմտյան) քաղաքակրթության գլխավոր բնօրրաններից մեկում՝ Առաջավոր Ասիայում: Ընդ որում, դրանց վկայակոչման մեջ խստորեն պահպանվել է ոչինչ չավելացնելու և չսակասեցնելու սկզբունքը: Նյութի շարադրման մյուս սկզբունքը եղել է հնագույն պատկերացումների վերականգնումն նախ ըստ օտար տեղեկությունների, ապա (որպեսզի բացառվի ազգային կողմնապահության արտահայտությունը) միայն դրանց մասին հայկական սկզբնաղբյուրների անդրադառնալը: Միաժամանակ, այս փորձն առաջինը լինելով՝ չի հավակնում վերջնականության և հետագայում կարող է համալրվել նոր տեղեկություններով:

ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄՈՏ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով քաղաքակրթության պատմության մեջ սկսվեց նոր՝ հելլենիզմի դարաշրջանը: Հելլենական մշակույթը քաղաքացե Հին Արևելքի երկրներ, իսկ Արևմուտքում ծանոթացան արևելյան մշակութային նվաճումներին: Նման փոխառնչությունների դարաշրջանում աչքի ընկան մի շարք խոշոր գործիչներ, որոնցից մեկը Բաբելոնի գերագույն աստված Բելի տաճարի քրմապետ Բերոսոսն էր¹:

Ծնված լինելով Ք.ա. մոտ 350 թ. և ստացած լինելով ժամանակի համար դասական կրթություն՝ նա Ք.ա. 4-րդ դարի վերջին մեկնում է Հունաստան և այնտեղ հիմնում աստղագիտության դպրոց: Ք.ա. 290 թվականին վերադառնալով Բաբելոն՝ Մեկեկյան Անտիոքոս Ա Սոտեր արքայից պատվեր է ստանում գրելու Բաբելոնի պատմությունը՝ հունարեն: Քրմապետը, լավագույնս ծանոթ լինելով միջագետքյան սեպագիր արձանագրություններին, գրեց «Բաբելոնիկա» եռահատոր աշխատությունը: Սակայն այդ խիստ արժեքավոր գործը չի պահպանվել մինչ օրս, նրանից մեզ են հասել միայն հատվածներ՝ գետեղված ու ինքնակենդանի երկրում, որոնք ևս մեծ կարևորություն են ներկայացնում հին աշխարհի պատմության ուսումնասիրության առումով²: Պահպանված հատվածներում ուշագրավ տեղեկություններ կան նաև Հայաստանի մասին, որոնցից առանձնանում է

¹Բերոսոսի կյանքի, գործունեության և րողած ժառանգության մասին մանրամասն տե՛ս Schnabel, 1923 գրքում:

²Բերոսոսի աշխատության առանձին հատվածներ մեզ են հասել ավելի ուշ շրջանի հեղինակների (Հովսեպոս Փլավիոս, Եվսեբոս Կեսարացի և ուրիշներ) երկերի միջոցով, որոնք ի մի են բերված Փ. Շնաբելի վերը նշված ուսումնասիրության վերջում գետեղված հավելվածում (էջ 250-275): Բերոսոսից օգտված որոշ հեղինակների (Ալեքսանդր Բազմավեպ, Աբյուդենոս և ուրիշներ) գործերը ևս մեզ չեն հասել:

համաշխարհային ջրհեղեղի մասին բաբելոնյան պատմությունը:

Ըստ Բերոսոսի հաղորդած ավանդության, Աստված արարչությունից հետո վեց անգամ հայտնվում է մարդկանց՝ տալով պատգամներ (այդ թիվը համընկնում է աստվածային համարված սրբազան գրքերի քանակին): Սակայն մարդկանց մեղսագործությունը սպառեց Աստծո համբերությունը, և Աստված որոշեց պատժել նրանց ջրհեղեղով: Աստծո արարարայատ աչքը չանտեսեց նաև մի քանի բաբելոնացիներին՝ Բսիսոթրոս արքայի գլխավորությամբ: Հենց նրան էլ պատվիրեց գրի առնել աշխարհի պատմությունն ու թաքցնել հողի տակ՝ ջրհեղեղից փրկվելու համար, պատրաստել մեծ նավ: Երբ ամեն բան պատրաստ էր, արքան ցանկացավ իմանալ, թե ուր պետք է հասնի իր նավը: Երկնքից պատասխան ստացվեց՝ «Աստվածների մոտ»...

Ջրհեղեղը ոչնչացրեց մեղսագործ մարդկությանը: Հասնելով ցամաքի՝ արքան իր կնոջ, դստեր և նավավարի հետ դուրս եկավ նավից և փրկարար լեռան վրա գոհ մատուցեց: Գոհացած աստվածներն անմահություն շնորհեցին նրանց և ընդունեցին իրենց մեջ: Նավում մնացածները դուրս եկան և սկսեցին փնտրել արքային ու նրա երեք ուղեկիցներին, սակայն՝ ապարդյուն: Երկնքից եկող ձայնը նրանց տեղեկացրեց չորս ընտրյալների ճակատագրի մասին, պատվիրեց վերադառնալ, գտնել թաքցված սուրբ գրքերն ու քարոզել բոլորին, վերահիմնել Բաբելոնը: Աստվածային խոսքից հայտնի դարձավ նաև, որ իրենց փրկության երկիրը Հայաստանն է:

Փրկվածները վերադարձան Միջագետք և գործեցին ըստ տրված պատվիրանների: Բերոսոսն ավելացնում է, որ նավի բեկորները մինչև իր ժամանակները պահպանվել են Հայաստանի լեռներում, որոնցից մարդիկ պոկելով ձյութի կտորներ, թախսմաններ են պատրաստել իրենց համար³:

Հիշենք քրմապետ Բերոսոսի պատմությունը՝ վկայված հին Միջագետքի սեպագիր հիշատակարաններով: Երբ բաբելոնացի արքան ցանկացավ իմանալ, թե ո՞ր պլանի հասնի իր նավը փրկվելու համար, երկնքից պատասխան լավեց. «Աստվածների մոտ»: Իսկ երբ փրկվածները ցած իջան նավից, երկնային ձայնն ավետեց, որ նրանք Հայաստանում են...

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Գժվար է պատկերացնել աշխարհում մի ժողովուրդ, որն ունեցած չլինի տիեզերաստեղծման, աշխարհարարման մասին ավանդազրույցներ: Հնավանդ այդ գրույցներում առավել կարևորվում է հատկապես այն վայրը, որտեղ տեղի է ունենում արարչագործությունը: Հենց այդ տեղն էլ դառնում է

³Ջրհեղեղի պատմությունն՝ ըստ Բերոսոսի՝ տե՛ս Schnabel, 1923, էջ 264-266; Հովսեպոս Փլավիոս, Ընդդեմ Ապիոնի, էջ 28; Հովսեպոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, էջ 54-55; Եսեբի Պամփիլեայ Կեսարացու, 1818, էջ 15-18, 24-25: Տե՛ս նաև «Երբ ջրհեղեղը սրբեց ամեն բան» բաժնում:

աշխարհի կենտրոնը՝ Արկրի արարը, որով անցնում է երկրի (ու տիեզերքի) առանցքը, այնտեղից են վեր խոյանում տիեզերական լեռը, համաշխարհային ծառը կամ վերջինիս կերպավորումներ կենաց և իմաստության ծառերը: Աշխարհի կենտրոնում բարձրացող լեռը կամ ծառը դառնում է տիեզերքում ներդաշնակության պահպանման խորհրդանշիչը, որի վերագումը կտանի մախասկզբնական քառախն՝ տիեզերակարգի ոչնչացմամբ: Ուստի և պատահական չէ, որ վիպա-առասպելական մտածողության մեջ արարչագործության կենտրոնը համարվել է առավելագույնս սրբազան մի վայր¹:

Արարչագործության մասին ամենավաղ գրի առնված գրույցների զգալի մասը մեզ է հասել Առաջավոր Ասիայից: Դրանցից առավել հանրահայտը Աստվածաշնչի Ծննդոց գրքում պահպանվածն է: Աստվածաշնչյան ավանդության համաձայն՝ Աստծու կողմից տիեզերքն ստեղծվեց վեց օրում և ավարտվեց մարդու արարմամբ, դրախտի կենտրոնում կենաց ու իմաստության (բարու և չարի իմացության) ծառերի աճեցումով (Ծննդոց, 1, 1-2, 15): Առաջիկա էջերում դեռ առիթներ կունենանք անդրադառնալու աստվածաշնչյան դրախտին, կենաց ու իմաստության ծառերին: Այստեղ բավարարվենք նշելով, որ դրախտի տեղորոշմանը ծառայող գլխավոր փաստարկը՝ այնտեղից չորս գետերի (Եփրատ, Տիգրիս, Գեհոն և Փիսոն) արտահոսելը, աներկբայորեն ցույց է տալիս, որ Աստվածաշնչում հիշվող դրախտը, հետևաբար նաև նրա կենտրոնում բարձրացող կենաց և իմաստության ծառերը գտնվել են Հայկական լեռնաշխարհում: Այլ կերպ ասած՝ արարչագործության կենտրոնն, ըստ Աստվածաշնչի, Հայաստանի տարածքն էր:

Թերևս ավելի սպասելի պիտի լիներ, որ Հին Կտակարանը գրի առած հրեաներն արարչագործության կենտրոնը համարեին իրենց հայրենի երկիրը, ինչը, սակայն, այդպես չէ: Այս փաստն առավել ուշագրավ և հատկանշական է դառնում, երբ Հայկական լեռնաշխարհը որպես արարչագործության կենտրոն է հանդես գալիս հին Առաջավոր Ասիայի մի շարք ժողովուրդների տիեզերաստեղծման ավանդություններում, որոնք գրի են առնվել Հին Կտակարանից դարեր առաջ:

Միջագետքի հարավի վաղագույն բնակիչները, որոնք մեզ հայտնի են գրավոր հուշարձաններով, շամերներն են՝ ցայսօր չպարզաբանված ծագումով մի ժողովուրդ, որը ստեղծեց յուրօրինակ մի քաղաքակրթություն (այդ թվում՝ հիմք դրեց սեպագրությանը) և Ք. ա. II հազարամյակի սկզբներին հեռացավ պատմության թատերաբեմից:

Ք. ա. III հազարամյակի I կեսին Արաբական թերակղզուց Միջագետք ներթափանցեցին սեմական ծագում ունեցող ցեղեր, որոնք կենտրոնական Միջագետքում ստեղծեցին նախ Աքադի, հետագայում՝ Բաբելոնի թագա-

¹Աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մոտ նման պատկերացումների մասին տես Վ.Բ.Տոպորովի “Гора”, “Древо жизни”, “Древо мировое”, “Древо познания” (МНМ, т. 1, 1992, с. 311-315, 396-407), “Пуп земли” (МНМ, т. 2, 1992, с. 350) հոդվածները:

վորությունները, իսկ հյուսիսում՝ Ասորեստանը: Նրանք յուրացրեցին շամերական քաղաքակրթության նվաճումները՝ յուրովի զարգացնելով դրանք: Փոխառությունների մեջ մեծ տեղ էին գրավում հոգևոր արժեքները, այդ թվում՝ արարչագործության վերաբերյալ որոշ ավանդազրույցներ, որոնք սերտաճեցին սեմականների հետ: Շամերական քաղաքակրթության նվաճումները սեպագրի հետ տարածվեցին նաև այլ ժողովուրդների շրջանում: Այդ է պատճառը, որ Միջագետքի հնաբնակ տարբեր ծագում ունեցող ժողովուրդների գրավոր հուշարձաններում հաճախ են հանդիպում մամնություններ և ընդհանրություններ, որոնց մի մասին առիթներ կունենանք անդրադառնալու մեր առաջիկա շարադրանքում:

Տիեզերաստեղծման վերաբերյալ շամերական ամբողջական բնագիր մեզ չի հասել: Այդ մասին առանձին դրվագներ են ներկայացվում զանազան բնագրերում, որոնցից հնարավոր չէ լիովին վերականգնել տիեզերաստեղծման շամերական ավանդությունը:

Արարչագործության մասին պատմող հին միջագետքյան ամենաամբողջական բնագիրը բաբելոնյան «Էնումա էլիշ...» («Երբ վերևում...») պոեմն¹ է: Նրանում պատմվում է, որ նախասկզբնական ժամանակաշրջանում՝ «երբ վերևում անվանակոչված չէր երկինքը, իսկ ներքևում ցամաքն էր անանուն», երկու առաջնաստեղծ օվկիանոսները՝ Ափսուն (շամեր. Աբգու) և նախամայր Թիսամարի, «իրենց ջրերը խառնեցին մեկտեղ», և ծնվեցին աստվածների առաջին սերունդները: Նրանց անհանգիստ վարքը, սակայն, սկսեց զայրացնել երկու նախաստեղծ աստվածներին, որոնք որոշում են ոչնչացնել երկտասարդ աստվածներին: Վերջիններին փրկեց նրանցից իմաստագույնը՝ Հայան², որը սպանեց Ափսուն և նրա վրա բարձրացրեց իր կացարանը՝ կոչելով հենց «Ափսու»³: Քառսից ա-

¹The Creation Epic, ANET, p. 60-72 (tr. E. A. Speiser); MM, p. 228-277 (tr. St. Dally); “Когда вверху...”-“Эпюма Эллиш” (Поэма о сотворении мира), ЯОТСС, с. 32-51, (пер. В. К. Афанасьевым). Պոեմն անվանակոչված է ըստ սկզբնաբառերի:

²Հայան (Էա, շամեր. Էնկի՝ «տիրակալ երկրի») բնագրում հանդիպում է նաև «Նուդիմնուդ» մակդիրով, որը նշանակում է «ստեղծող, արարիչ»): Հայա-Էնկիի արարչագործության բազմաթիվ դրվագներ են պատմվում միջագետքյան մի շարք բնագրերում (այդ մասին՝ ստորև):

³Աբգու (Ափսու) անվամբ Միջագետքում առավելապես հայտնի էին ստորերկրյա օվկիանոսը, որի տիրակալն էր Հայա-Էնկին, և այդ աստծու տաճարները: Խեթական (Ափսուվա) և խոտիական ավանդություններում Աբգուն հանդես է գալիս նաև որպես երկրային տարածք (խոտիականում՝ քաղաք, տես ԱՄՆ, с. 309), որը, թերևս, ստորերկրյա օվկիանոսի և երկնքի կապի շրջանն է: Հին միջագետքյան պատկերագրության մեջ սովորաբար Եփրատն ու Տիգրիսը սկզբնավորվում են Աբգուի տիրակալ Հայա-Էնկիի ուտերի շրջանից կամ ձեռքին բռնած սկիհից (տես նկար 1-2): Նույն աստվածը հայտնի է նաև «Բեղ նագբի» «ակունքների տիրակալ» տիտղոսով (ինչը, հասկանալիորեն, վերաբերում է Եփատի և Տիգրիսի ակունքներին), Եփրատով հոսող Տուրս ջուրը համարվել է Աբգուից սկիզբ առնող (A collection of Sumerian and Akkadian Incantations, Graz, 1958, IX, p. 119-124, հղումն ըստ

գատված իր նոր կացարանում Հայան մերձենալով կնոջ հետ՝ ծնեց Մարդուկին: Կարգ ու կանոնի հաստատվելը քառսուն և ամուսնու վրեժի հանգիստ չեն տալիս Թիամաթին, որը որոշ ժամանակ անց մարտի է դուրս գալիս երիտասարդ աստվածների դեմ: Նրանցից և ոչ մեկը չի հանդգնում դուրս գալ Թիամաթի դեմ, և դրությունը փրկում է միայն պատանի Մարդուկը: Վերջինս համաձայնում է մարտնչել ընդդեմ Թիամաթի, եթե բոլոր աստվածները ճանաչեն նրա գերագույն իշխանությունը, ինչին տրվում է համաձայնություն: Վճռական մարտում Մարդուկը հաղթում է Թիամաթին, և սկսվում է տիեզերքի արարումը նրա կողմից: Թիամաթի մարմինը երկատելով՝ նա մի կեսից նախ ստեղծում է երկինքը, ապա գլխի վրա բարձրացնում է նախնական լեռը, որի ներսից՝ Թիամաթի երկու աչքերից բխեցնում է Տիգրիսն ու Եփրատը¹: Մարմնի մյուս կեսից Մարդուկը ստեղծում է երկիրը և ամրապնդում երկնքի ու երկրի կապը: Այնուհետև Հայա աստվածն արարում է մարդկային ցեղը, «Աբգուի» նմանությամբ աստվածները կառու-

Бернштам, 1987, էջ 262-263): Աբգուում էին պահվում տիեզերքը կառավարող աստվածային սուրբ օրենքները («մե»), իսկ շումերական էպոսում «աստվածային սուրբ օրենքների երկիր» է կոչվում Արատտան՝ Հայկական լեռնաշխարհի ցայտօր հայտնի առաջին պետական կազմավորումը (տե՛ս էջ 36, ծնթ 1 և Հավելված Ա): Նշված փաստերը ցույց են տալիս, որ ստորերկրյա օվկիանոսի և երկրի կապի շրջանը, վերերկրյա Աբգու՝ այն շրջանը, որում Հայան սպանեց նախաստեղծ Աբգու-օվկիանոսին և նրա վրա կանգնեցրեց «Աբգու» կոչվող իր կացարանը, գտնվել է Հայկական լեռնաշխարհի տարածքում: Նման երահանգման օգտին է խոսում Ք. ա. III հազարամյակի միջագետքյան մի կնիք (նկ. 1), որին Հայա-Էնկին պատկերված է Եփրատն ու Տիգրիսը խորհրդանշող ջրաշիբերով և մի ոտքը Հայկական լեռնաշխարհի հարավը եզերող Մաշու (Մասիուս-Մասիոն, տե՛ս էջ 13, ծնթ. 1) լեռներին հենած (որոնց մեջտեղից ծագում է արևը): Նույն կնիքի վրա Հայա-Էնկիի ոտքերի միջև ամասում պատկերված կենդանին ցույց համարելով՝ Ա.Փիլիպոսյանն ու Հ.Քամալյանը այն դիտարկում են որպես «խորհրդանշային աշխարհագրական ծածկագիր»՝ Տավրոսյան լեռների, և վերջիններս Եփրատի ու Տիգրիսի ակունքի շրջանի՝ հետ համարում են Աբգուի տարածքը: Հեղինակներն Աբգուի հետ են կապում Հայկական լեռնաշխարհի մի շարք տեղանուններ՝ Աբգերիկ, Աբսաձոր, Ապագվանը, Ապիգողե, Ապշոտիձոր, Բագու, Բզնունիք, Բզնունյաց լեռներ, Բզնունյաց ծոց (և կղզիներ) և այլն (Փիլիպոսյան, Քամալյան, 1997, էջ 67-69): Ա. Փիլիպոսյանի ու Հ. Քամալյանի դիտարկումը՝ կապված ցույցի և Տավրոսյան լեռների հետ, շահեկան կլիներ խնդրի լուծման համար, սակայն հարկ է նշել, որ պատկերված կենդանին ոչ թե ցույ է, այլ՝ այժ (վերջինս կապվում է Հայա-Էնկիի պաշտամունքի հետ, կենդանատեսք պատկերվելիս նա ներկայացվում էր այժի գլխով և ձկան մարմնով, իսկ նրա նավը կոչվում է «Աբգուի այժ»): Այդուհանդերձ, Մաշու լեռների առկայությունը, ինչպես նաև շումերական «Էնկի և Նինմախ» ասրի համաձայն՝ մարդու արարումը Հարալիում Աբգուի կավից (տե՛ս «Աստծո պատկերով ու նմանությամբ» բաժնում) և մեր վերը շարադրած փաստարկները լիովին բավարար են Աբգու-Հայկական լեռնաշխարհի կապը ցույց տալու համար: ¹Պոեմի մեկնություններում այս մասին մանրամասնվում է՝ «Տիգրիսը նրա աջ աչքն է, Եփրատը՝ ձախ աչքը» (ՊՕՏՇՇ, c. 287):

ցում են Բաբելոնը «Աստծո դարպասները», ուր հավիտյանս պիտի իշխեր Մարդուկը բաբելոնցիների գերագույն աստվածը²:

Տիեզերաստեղծման այս պատմության մեջ, իբրև արարչագործության կենտրոն, հանդես է գալիս նախնական լեռը՝ բարձրացված Թիամաթի գլխի վրա, որը յուրօրինակ կապ է դառնում երկնի և երկրի միջև: Լեռնից սկզբնավորվում են Տիգրիսն ու Եփրատը, այսինքն՝ այստեղ ևս արարչագործության կենտրոնը Հայկական լեռնաշխարհի տարածքն է:

Քառսային ուժերի դեմ հաղթանակի, պարտված հակառակորդի վրա լեռ բարձրացնելու և նոր աշխարհակարգ ստեղծելու այուժեն է քնկած նաև շումերական Նինուրթա աստծուն (գերագույն աստված Էնլիլի ույալուն) փառաբանող վիպասքում³: Հատկանշական է, որ այստեղ ևս նոր աշխարհակարգի հաստատումը տեղի է ունենում Հայկական լեռնաշխարհում՝ Տիգրիսի ակունքի շրջանում:

Հին միջագետքյան աշխարհընկալումների համաձայն՝ տիեզերակարգը հաստատուն են պահում Մաշու (Մասու) լեռները, «որ այգալույսն ու մայրամուտն են ամեն օր պահպանում, վերևում հասնում են երկնային ձուլվածքին, ներքևում՝ նրանց կործարքը սանդղաբանետին է հասնում»⁴: Այս լեռները, որոնց Գլիգամեշը հասնում է անմահության երկրի ճանապարհին (որը ձգվում էր Եփրատի ափով), և՛ տեղանքով, և՛ անվամբ նույնանում են Հայկական լեռնաշխարհի հարավից եզերող Քաշիարի (ներկայումս՝ Տուր-Աբդիլին) լեռներին, որոնք հունական և միջնադարյան հայկական աղբյուրներում հայտնի են Մասիուս և Մասիոն անուններով⁵:

Մեծական ցեղերի արևմտյան մի հատվածը քնակվելով ներկայիս Սյրիայի ելուսխում՝ Ք.ա. 14-13-րդ դարերում ստեղծեց Ուգարիթ քաղաք-պետությունը, որից մեզ են հասել մեծ թվով գրավոր հուշարձաններ: Ուգարիթյան բնագրերի համաձայն, նրանց գերագույն աստված Իլուի (Էլի) բնակավայրը գտնվում էր Մեծ Գետի ակունքներում, որտեղից սկզբնավորվում էին երկու օվկիանոսները⁶: Ուգարիթյան տեղեկությունների քննությունը կին առաջավորասիական պատկերացումների համատեքստում քույլ է տալիս Իլուի (Էլի) բնակավայրը տեղադրել Հայաստանի լեռներում, Մեծ Գետը նույնացնել միջագետքյան անմահության երկրի և Աստվածաշնչի Եդեմի մայր գետի հետ (տե՛ս «Աստծո պատկերով ու նմանությամբ» ակնարկում), իսկ երկու օվկիանոսների (երկնային և երկրային կամ. գուցե, ստորերկրյա) սկիզբը մեկնաբանել իբրև աշխարհարարման կենտրոն⁷:

¹Պոեմի աշուրական տարբերակում Մարդուկին փոխարինում է Աշուրի գլխավոր աստվածը (ՊՕՏՇՇ, c.284), որը, համկանալիորեն, պայմանավորված է վերջինիս գերագույն իշխանությունը շեշտելու միտումով:

²van Dijk, 1983; Kramer, 1961, p.79-82; Крамер, 1965, c. 206-208; ETCSL, 1.6.2.

³ՆԱՊ, էջ 143; ПП/АВ, c. 200-201; ANET, p. 88; MM, p. 96.

⁴Տե՛ս «Անմահության որոնումներում. Հայոց երկրի ճանապարհը» բաժնում:

⁵Пифрман, 1987, c. 56, 85 (նաև հղված գրականությունը):

⁶Lipinski, 1971, p. 41-57:

կամ ավանդագրությունների սերմնավառարար կենսածին լեռանը՝ հիեղեբանյամ լեռ ստորարար հանդես է գալիս ևռամաս կառուցվածքով, որի գագաթին բնակվում են աստվածները, լեռան տակ՝ չար ուժերը, իսկ կենտրոնում (երկրի վրա)՝ մարդիկ¹։ Մեծ Մասիսը հայ մատենագրության մեջ հայտնի է իբրև «արեգակնածեմ լեռան»², «բարձրագույն լեռան բան ընդ ամենայն տիեզերս»³, որի ընդերքում բնակվում էին չար ուժերը⁴։ Դա ցույց է տալիս, որ հայոց փառնջական հավատալիքներում Մեծ Մասիսը եւ ներկայացել է որպես արարչագործությունից հետո տիեզերակարգը պահպանող սրբազան լեռ։

ԱՐԵՎԻ ԵՐԿԻՐԸ

Աստվածաշնչում դրախտը՝ Եդեմը, հիշատակվում է «արևելքի կողմում» (Ծննդոց 2, 8)։ Ծննդոց գրքի մեկ այլ մասում պատմվում է, որ Նոյի տապանը փրկվեց Արարատի լեռներում (իմա՝ Հայաստանում), հետո դեռես մեկ լեզվով խոսող մարդիկ «արևելքից» գնացին և Սեննարի երկրի մի դաշտում որոշեցին կառուցել երկնահաս «բարեբունյան աշտարակը»։ Դրա համար Աստված խառնեց մարդկանց լեզուները և փռեց նրանց աշխարհով մեկ (9, 1-9)։ Երկու դեպքում էլ Հայաստանը (Եդեմ - դրախտ և Այադատի լեռներ) ներկայացվում է իբրև արևելքի երկիր, միևնույն, այն Հին Կտակարանը գրի առած հրեաների երկրից հյուսիս էր գտնվում։ Նույն գրքի մեկ այլ դրվագում երրորդ անգամ կրկնվում է միևնույն պատկերացումը. «Եվ Հակոբը ճամփա ելավ և գնաց արևելքի որդիների երկիրը... Եվ Հակոբն առաց նրանց. «Եղբայրներս, որտեղի՞ց եք դուք»։ Եվ նրանք ասացին. «Մենք Խառանից ենք»...» (Ծննդոց 29, 1-5)։ Հակոբը Պաղեստինի հարավային Բերսաբե քաղաքից ճանապարհվում է Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան սահմանի հարևանությամբ գտնվող հյուսիսմիջագետքյան Խառան քաղաքը, որը, չնայած Բերսաբեից ողիղ հյուսիս գտնվելուն, կոչվում է «արևելքի որդիների երկիր»։ Բերված փաստերը ցույց են տալիս, որ գոնև Ծննդոց գրքում Հայկական լեռնաշխարհը որոշ հարակից շրջանների հետ համարվել է «արևելքի երկիր»⁵։ Որտեղի՞ց է գալիս նման պատկերացումը։

¹Մարտիրոսյան, 2000։ Հեղինակը հավելում է տիեզերաստեղծման ավանդագրությունի հետքեր տեսնել «Մասնա ճեղք» էպոսի առաջին մասում, որ «Կապտո ծովը» (որին «ծիր չկա») խորհրդանշում է տիեզերական օվկիանոսը, «ոչ ոք քարը» տիեզերական լեռը, նրանից բխող է «քարի չորս բոլորք բռնած» «սպիտակ աղբյուրը»՝ «սնմահական» ջուրն ու աշխարհի չորս կողմերը ռոզգող դրախտային գետը։

²Топоров В.Н., "Тора", МНМ, т. 1, 1992, с. 311-315.

³Մովսիսի Խորենացույ, 1913, էջ 39։

⁴Հերոն պատմիչ, 1842, էջ 14։

⁵Մովսիսի Խորենացույ, 1913, էջ 192։ Մեծին Վարդանայ Բարձրբերդույ, 1861, էջ 51։

Կանանայան, 1969, էջ 362-364, 481։

⁶Հարկ է նշել, որ Հին Կտակարանում միշտ չէ «արևելք» ասվելով հասկացվում

Միջագետքյան «Գիլգամեշ» էպոսում դրախտի ու անձախոթյան երկրի սահմանը Մաշու՝ լեռներն են, ուր տեղի են ունենում արևածագն ու մայրամուտը։

Նա լսել էր լեռների մասին, որոնց անունն է Մաշու,

Հենց որ այդ լեռներից նա մոտեցավ,

Որ այգալույսն ու մայրամուտն են ամեն օր պահպանում,

Վերևում հասնում են երկնային ձուլվածքին,

Ներքևում՝ նրանց կույրձքը սանդարամետին է հասնում,

Մարդակարիճներն են պահպանում նրանց դարպասները,

Մարկու է տեսքը նրանց, հայացքը՝ կործանող,

Նրանց առկայծող փայլը լեռներ է տապալում։

Արև ծագելիս ու մայր մտնելիս՝ Արևն են նրանք պահպանում...⁷

Այսինքն՝ ըստ հին միջագետքյան պատկերացումների (որոնց մի մասը տեղ է գտել Աստվածաշնչում), Հայաստանը արևածագի (արևի ելման արևելքի) ու մայրամուտի երկիրն էր, արևի հանգրվանատեղը։ Եվ Միջագետքից ու Պաղեստինից հյուսիս տարածվող լեռնաշխարհը համարվել է «արևելք» ոչ թե բառի աշխարհագրական կողմ ցույց տվող, այլ «արևի ելքի երկիր» իմաստով։ Հետագայում նախնական իմաստը մոռացվել է, և բառն րնկալվել է աշխարհագրական իմաստով։ Ասվածը կարելի է հիմնավորել նաև նրանով, որ Հայկական լեռնաշխարհի՝ արևի հանգրվանատեղը լինելու մասին պատկերացումը պահպանվել է նաև խեթական աղբյուրներում։ Վերջիններիս համաձայն, արեգակը ծագում էր «Արևելյան ծովից», որը, դատելով փաստերից, Վանա լճի խեթական անվանումն է⁸։ Գա լիովին համահունչ է Գ. Սրվանձտյանցի 19-րդ դարում գրի առած հայկական ավանդագրություններին, որոնց համաձայն արևի ննջարսնը գտնվում էր Վանա լճի հատակին, որտեղից ամեն առավոտ ելնում և ուր ամեն գիշեր վերադառնում էր ցերեկվա լուսատուն⁹։

Հայաստանի՝ արևելքի երկիր (ոչ աշխարհագրական իմաստով) լինելու մասին չափազանց հետաքրքիր տեղեկություն է պահպանել «Մասնա

Հայկական լեռնաշխարհն ու հարակից շրջանները, իսկ Երեմիայի և Եզեկիելի մարգարեություններում հայաստանյան պետական կազմավորումները ճշգրտորեն համարվում են հյուսիսային։ Դ. Ալիշանը վկայակոչելով անցյալում հայտնված տեսակետները Հայաստանը «Արևելք» կամ «Արևելյան տուն» կոչելու վերաբերյալ և վերլուծելով Հին Կտակարանի այլ դրվագները՝ եզրակացնում է, որ Աստվածաշնչում «արևելք» են կոչվում Եփրատից արևելք ընկած բոլոր երկրները (Ալիշան, 1904, էջ 252, ծմբ. 8)։

¹Գիտական շրջանակներում եղել են Մաշուն Մեծ Մասիսի և Հայկական լեռնաշխարհի հարավը եզերող Մասիոս / Մասիոն (այժմ՝ Տուր-Արդին) լեռների հետ նույնացման առաջարկներ, որոնցից առավել ընդունելի է երկրորդը (Lehmann-Haupt, 1927, S. 797-798; Ինգլիզեան, 1947, էջ 119-132; Lipinski, 1971, p. 49-50)։

²ՀԱՊ, էջ 143; ПП/АВ, с. 200-201; ANET, p. 88; MM, p. 96.

³Иванов, 1980, с. 136:

⁴Սրվանձտյանց, 1978, էջ 76:

ծոեր» կամ «Սասունցի Գավիթ» էպոսը, ինչը մի տեսակ անուշադրություն է մատուցել: Էպոսի «Սանասար և Բաղդասար» ճյուղի առաջին մասում («Կովի Բաղդադի խալիֆայի դեմ») Շովինարը որդիներին խորհուրդ է տալիս Բաղդադից փախչել Հայաստան՝ հետևյալ խոսքերով .

Փախեք, գնացեք Հայոց թագավորի քաղաք:

Գլշեր պայծառ աստղն թռնեք նշան,

Ցերեկն էլ հարցուցեք

Արևելից թագավորի երկիր¹:

Հայաստանը մեր էպոսում կոչվում է «Արևելքի թագավորի երկիր», մի բնորոշում, որը կարող էր ծագել ու պահպանված լինել միայն և միայն հնագույն ժամանակներից²:

Ի մի բերելով շումերա-աքադական, խեթական, հիներրայական (աստվածաշնչյան) և հայկական աղբյուրների տվյալները՝ տեսնում ենք, որ Հայաստանը հնագույն ժամանակներում պատկերացվել է իբրև արևի բնակության վայր, հանգստարան, արևի երբի (արևելքի) և մուտքի երկիր:

Վերջում անենք մի ենթադրություն: Ինչպես տեսանք Հին Կտակարանի կարևորագույն դրվագներում (Եդեմ, ցրիեղեղ և այլն), Հայաստանը հանդես է գալիս իբրև «արևելք»: Ելնելով դրանից՝ չի³ կարելի, արդյոք, ենթադրել, որ Նոր Կտակարանում ևս հիշատակվող «մոզերն արևելքից», որոնք առաջինը եկան ողջունելու Հիսուս-Քրիստոսի ծնունդը, Հայաստանի քրմերն էին, և առաջինը ողջունելը միատիպական ինչ-որ խորհրդով չի⁴ կապվում, արդյոք, քրիստոնեությունը պետականորեն առաջին անգամ Հայաստանում բնորոշվելու հետ...

ԿԱՃԱՌՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ

Առաջին բաժնում նշվեց, որ հին միջագետքյան սեպագիր աղբյուրների յուրօրինակ հանրագիտարան հանդիսացող Բերուստի (Ք.ա. 4-3-րդ դդ.) «Բաբելոնիկա» եռահատոր աշխատության մեջ Հայաստանը ներկայանում է իբրև աստվածների բնակավայր: Եվ այդ տեղեկությունն իր տեսակի մեջ եզակի չէ:

Միջագետքյան «Գլիզամեշ» էպոսի համաձայն, ցրիեղեղից հետո մեծ աստվածները ժողովի հավաքվեցին փրկության լեռան վրա և փրկված հե-

¹Սասունցի Գավիթ, 1939, էջ 27; 1981, էջ 21: Նոր համահավաք բնագրում այս հատվածը բերվում է ոչ էական տարբերությամբ (Սասունցի Գավիթ, 1993, էջ 35):

²Ուշագրավ է, որ Լաբուրնս դպրի նրկում Թադեոս առաքյալի Եդեսիայից դեպի հյուսիս՝ Հայաստանի խորքերը քարոզելու գնալը ներկայացվում է այսպես՝ «Եվ նա ելավ գնաց դեպի Արևելք՝ քարոզելու Քրիստոսի Ավետարանը» (Լաբուրնեայ, 1868, էջ 46; հմմտ. Պետրոսյան, 1990, էջ 7): Բնագրի հին ասորական տարբերակի համաձայն՝ Թադեոսը Եդեսիայից անցել է Շուփ (Պետրոսյան, 1990, էջ 7), որը Եդեսիայից հյուսիս էր գտնվում: Տվյալ բնագրում Հայաստանի հանդես գալն իբրև «Արևելք», բերևս, հնագույն շրջանից եկող հիշողության արտահայտություն է:

րսային անմահություն շնորհեցին «աստվածների կաճառում»¹: Միջագետքյան աստվածությունը ցրիեղեղից փրկությունն ու նոր մարդկության սկզբնավորումը կապում է Հայկական լեռնաշխարհի հետ (տես «Երբ ցրիեղեղը պրեց ամեն բան» բաժնում), ուստի և այնտեղ պետք է գտնվեր «աստվածների կաճառը»: Այնտեղ մեծ աստվածները ժողովի հավաքվելով՝ վճռել են կարևորագույն հարցեր, որոնցից էլ մարդկությանը վերապրելու իրավունքի շնորհումը:

Աստվածների «ժողովի լեռան» մասին հիշողություն է պահպանվել Աստվածաշնչի Եսայա մարգարեության Բաբելոնի թագավորին վերաբերող հատվածում. «Գ-ու սրտիդ մեջ ասում էիր. «Երկիրը պիտի բարձրանամ ու իմ արքոս Աստծո աստղերից վեր պիտի բարձրացնեմ. և այլտի բնակվեմ ժողովի լեռան վրա՝ հյուսիսի կողմերում. ամպերի բարձրության վրա պիտի բարձրանամ, Բաբելոնային պիտի նմանվեմ...» (14, 13-14): Աստծո գաղտնիստում է հիշատակում նաև Հին Կտակարանի պարսկանոն գլխաբանից մեկը՝ Ենոքի I գլխորդ (25, 3-5)²: Աստծո բնակավայրի հյուսիսում գտնվելու պատկերացումն այնքան տարածված է եղել հին երրայական իրականության մեջ, որ Սյուն լեռը Սաղմոսաց գրքում համարվել է հյուսիսում գտնվող, չնայած այն բարձրանում էր Երուսաղեմում. «Տերը մե՞ծ է և խիստ օրինյալ մեր Աստծո քաղաքում, իր սուրբ լեռան վրա: Ողջ երկրի ուրախությունը՝ հյուսիսային կողմերում եղող Սյուն լեռն է Մեծ Թագավորի քաղաքը» (47/48, 1-2):

Հին Միջագետքում և հին երրայեցիների շրջանում աստվածների ժողովավայրի մասին եղած տեղեկությունները համադրելի են հյուսիսային կասկան Ուզարիթ քաղաքից (Ք.ա. 14-13-րդ դդ.) հայտնաբերված դիցաբանական բնույթի հաղորդումների հետ: Գրանց համաձայն, գերագույն աստված Բյուի բնակավայրում, որը գտնվում էր Հայաստանի լեռներում³ (ըստ քանանական աքի ուշ խեթական տարբերակի՝ Արմ. Եփրատի՝ Մալա գետի ակունքի շրջանում⁴) ժողովի և խնջույքի էին հավաքվում ուզարիթյան դիցարանի աստվածները:

Աստվածների ժողովավայրում նրանց խնջույքների մասին է անուղղակիորեն վկայում «Գլիզամեշ» էպոսը, որի համաձայն Գլիզամեշը Մաշու լեռները հաղթահարելուց (յնա՝ Հայկական լեռնաշխարհի մուտք գործելուց) հետո հանդիպում է Սիուրիին՝ «աստվածների տնտեսուհուն», որը «տնական գաբեջուր է հյուրասիրում նրանց»⁵: Միջագետքյան աստվածները խնջույքով են նշում նաև մարդու արայումը, որը կատարվեց Հայկական լեռնաշխարհում (տես «Աստծո պատկերով ու նմանությամբ» բաժնում):

¹ԷԱՊ, էջ 155; III/AB, c. 212; ANET, p. 93; MM, p. 109.

²Lipinski, 1971, p. 56.

³Lipinski, 1971, p. 41-57.

⁴E1, Ashertu and Storm-god (tr. A. Goetze), ANET, p. 519; JYH, c. 167-169; Lipinski, 1971, p. 56.

⁵ԷԱՊ, էջ 146; III/AB, c. 204; ANET, p. 89; MM, p. 99.

Աստվածների ժողովատեղ լինելուց բացի, հնագույն առաջավորասիական հավատալիքներում Հայկական լեռնաշխարհը համարվել է նաև ասանձին աստվածների բնակավայրը կամ կապվել նրանց պաշտամունքի հետ: Լեռնաշխարհի հետ են կապվել միջագետքյան մեծ աստված Հայա-Էնկիի և նրա որդի Գունուզիի պաշտամունքը, որոնց մասին կխոսվի ասանձին: Ըստ խուռիական դիցաբանության՝ Հայկական լեռնաշխարհի հարավում էին գտնվում միայնակ հաջորդած երկու գերագույն աստվածների կացարան-պաշտամունքային կենտրոնները, Կումարբիինը՝ Ուրկիշում (Մաշու/Մասիոն լեռների շրջանում) և Թեշուբիինը՝ Կումմեում (Մեծ Հայքի Կողովաց աշխարհի տարածքում)¹: Հայոց լեռնաշխարհը մի շարք ժողովուրդների ավանդազրույցներում համարվել է Արև աստծո բնակատեղին, որոնց անդրադարձանք նախորդ բաժնում:

Հայկական լեռնաշխարհի՝ աստվածաբնակ տարածք լինելու մասին պատկերացումը չէր կարող գոյություն ունենալ Առաջավոր Ասիայի բազմաթիվ ժողովուրդների մոտ, առանց նրա տեղաբնիկների շրջանում լայն տարածում ունենալու: Եվ որքան էլ քրիստոնեության մուտքը Հայաստան ուղեկցվեց նախաքրիստոնեականի ոչնչացմամբ, այդուհանդերձ, վաղ միջնադարի հայ մատենագրության էջերում պահպանվեցին նմանաբնույթ ուղղակի և անուղղակի տեղեկություններ: Ինչպես արդեն նշել ենք, ըստ Փավստոս Բուզանդի՝ Բարձր Հայքի Մեծ լեռը հայտնի է եղել իբրև «աստվածների տեղ»²: Իսկ Բարձր Հայքն «Աշխարհացոյցում» բնութագրվում է որպես «աշխարհի գագաթ»³: Նույն աղբյուրը «աշխարհի գագաթ» պատվատիտղոսով է հիշում Բարձր Հայքի հարևանությամբ բարձրացող Բյուրակնի Սերմանց (Սյրմանց) լեռը⁴, իսկ Բյուրակնի լեռներում, ըստ մինչև մեր ժամանակները պահպանված հայկական ավանդազրույցների, գտնվել է երկրային դրախտը (տե՛ս «Աստծո պատկերով ու նմանությամբ» բաժնում):

Ի մի բերելով առաջին բաժիններում ասվածը՝ տեսնում ենք, որ շումեր-ուս-սքադական, բաբելոնյան, ուգարիթյան, քանանական, խուռիական, խեթական, հին եբրայական (աստվածաշնչյան) և հին հայկական աշխարհընկալումներում Հայաստանը վաղնջական ժամանակներից ի վեր ներկայացել է իբրև արարչագործության կենտրոն, աստվածաբնակ երկիր, աստվածների ժողովատեղ, կաճառ, ուր նրանք հավաքվել են և՛ կարևորագույն խնդիրներ լուծելու, և՛ խնջույքների...

¹ЛУН, с. 125-140; Хачикян М.Л., Кумарян, МНМ, т. 2, с. 28; Иванов В.В., Тешув, МНМ, т. 2, с. 505:

²Փաստոսի Բիւզանդացոյ, 1912, էջ 327:

³Երեմյան, 1963, էջ 106; Անանիա Շիրակացի, 1979, էջ 291:

⁴Երեմյան, 1963, էջ 107-108; Անանիա Շիրակացի, 1979, էջ 293:

Հին միջագետքյան գրավոր աղբյուրներում ուշագրավ տեղեկություններ են պահպանվել Հարալի (տարբերակներ՝ Արալի, Արալու, Խարալի) երկրի մասին: Դրանց համաձայն, այն ներկայանում է երեք կերպարով.

ա) աստվածների բնակավայր՝ նախքան մարդու արարումը, քաղաքակրթության բնօրրան,

բ) անդրաշխարհ,

գ) իրական մի երկիր, որը հարուստ էր ոսկու հանքերով¹:

Հարալիին վերաբերող բոլոր վկայությունների քննությունից պարզ է դառնում, որ այն եղել է իրական-պատմական մի երկիր՝ վկայված մինչև Ք.ա. 7-րդ դարը, որի հետ կապված հնագույն պատկերացումները առասպելականացրել-վիպականացրել են այն՝ նախ ներկայացնելով իբրև աստվածների բնակատեղի, ապա՝ անդրաշխարհ: Բարեբախտաբար, մեզ հասած գրավոր աղբյուրների ուսումնասիրությամբ հնարավոր է պարզել այդ նվիրական ու առեղծվածային, բայց և իրական երկրի տեղը:

Խնդրի լուծման համար կարևոր նշանակություն ունի շումերական «Էնկի և Նինխուրագ» վիպաաբի Ք. ա. 20-18-րդ դարերով քվազովող լնդմիջարկությունը, ուր կարելի է կոչել «Գովք Թիլմունի առևտրի»²:

Վիպաաբի մեզ հետաքրքրող հատվածի համաձայն՝ Հարալիից ոսկի էր առաքվում Թիլմուն՝ Տուգրիշ երկրի միջոցով: Պատմական Թիլմունը գտնվել է Պարսից ծոցի Բահրեյնյան կղզիներում (տե՛ս «Շումերական դրախտի առեղծվածը» բաժնում): Տուգրիշի վերաբերյալ ևս ունենք բազմաթիվ տեղեկություններ³: Սարգոն Աշուրացին (Ք.ա. 19-րդ դ.) Տուգրիշը հիշատակում է Լուլլուբի (Ուրմիա լճից հարավ) և Սուբիր-Սուբարաու (հետագայի Արմե-Շուբրիսան՝ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում և Սիջագետքի հյուսիսում) երկրների միջև: Լուլլուբիի հարևանությամբ է հիշվում Տուգրիշը նաև Խեթական տերության մայրաքաղաքից գտնված խուռիերեն մի բնագրում (Էլամ-Լուլլուբի-Տուգրիշ հեթանոսականությամբ. Էլամը երկիր է Իրանական սարահարթի հարավ-արևմուտքում): Բաբելոնի նշանավոր արքա Համմուրայի (Ք. ա. 18-րդ դ.) արձանագրություններից մեկում այն վկայված է Էլամից, Գուտիումից (Կուտիում՝ Մեծ Հայքի Կողովաց աշխարհի տարածքում) և Սուբիրից հետո: Իսկ հին աշուրական Շամշի-Ադադ I (Ք. ա. 19-18-րդ դդ.) արքան Տուգրիշը հիշատակում է Վերին երկրի հարևանությամբ. վերջինս գտնվել է Եփրատի ու Տիգրիսի վերին հոսանքի շրջանում՝ Հայկական լեռնաշխարհում (որոշ հեղինակների կարծիքով, այն պետք է նույնացնել Բարձր Հայքի հետ): Այս տեղեկոթ-

¹Հարալի երկրի վերաբերող հիշատակությունների մասին տե՛ս Komoroczy, 1972, p. 113-123; AD, vol. I, part II, 1968, p. 226-227:

²Enki and Ninursag: a Paradise Myth (tr. S.N.Kramer), ANET, p. 37-41; ETCSL, I.1.1. Ընդմիջարկության ուսումնասիրությունը տե՛ս Komoroczy, 1976, c. 5-36:

³Комороци, 1976, с. 12-13, прим. 26-36 (և հղված գրականությունը):

յունների անփոփոմից ակնհայտ է, որ Տուգրիշը տարածվել է Հայկական լեռնաշխարհի առնվազն հարավում՝ Լուլլուբումի, Գուտլումի և Մուբիլի հարևանությամբ¹ (տե՛ս քարտեզ 1): Ուստի և Հարալին պետք է փնտրել Բահրեյնյան կղզիներից Հայկական լեռնաշխարհի հարավ ձգվող գծի շարունակության ոլորտում, իմա՝ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական կամ հյուսիսային շրջաններում: Այս եզրահանգումը հաստատվում է մեկ այլ փաստով ևս: Հին աշխարհում հաճախ յուրօրինակ ապրանքները ստանում էին արտադրող երկրի անունը: Մութարտուից Միջագետք առաքվող դեղների մի տեսակը կոչվում է «Հարալի»², ինչը, եթե համադրենք մի կողմից Մութարտու-Տուգրիշ սահմանակցության, մյուս կողմից՝ Հարալիի և Տուգրիշի հավանական հարևանության փաստերին, կստանանք Հարալիի և Մութարտուի տարածքային համընկնում կամ մոտիկություն, թեպետ չի բացառվում, որ այստեղ գործ ունենք Հարալիից Մութարտուի միջոցով Միջագետք առաքվող դրան տեսակի հետ: Այս դեպքում Հարալին պետք է փնտրել Մութարտուից հյուսիս՝ կրկին Հայկական լեռնաշխարհում:

Ամփոփելով այս համառոտ տեղագրական վերլուծությունը՝ արձանագրենք, որ Հարալին գտնվել է Հայկական լեռնաշխարհում, և հենց տեղանունն իսկ շատ հարագատ է հայաստանյան միջավայրին. երկրանվան (-ա)լի վերջավորությունը (մաս հետագա -աղի տարբերակով) լայն տարածում ունի լեռնաշխարհի տեղանուններում (Արամալի, Այալի, Մանանաղի, Դարանաղի, Մարդաղի և այլն): Թե՛ ավելի ճշգրիտ Հայկական լեռնաշխարհի ո՞ր մասում է գտնվել Հարալին, դժվար է ասել: Մեր նախորդ աշխատանքներից մեկում ենթադրել էինք, որ այն կարող է տեղայնացվել Հայկական Տավրոսի լեռներում (Արլլ և Օրուլ գյուղերի կամ Պտղոմեոսի հիշատակած Արանե կայանի շրջանում) կամ, գուցե, Վանա լճից արևելք՝ Արալեզք (Լեզք) գյուղի ու դաշտի տարածքում³: Չի բացառվում մաս Հարալի տեղանվան նույնությունը Հարք գավառանվան հետ, որի դեպքում կարելի է կապ տեսնել հայոց անվանադիր նախնի, դյուցազն Հայկի հիմնած առաջին և ի պատիվ հայրերի (իմա՝ աստվածների⁴) անվանակոչած Հարք գավառի⁴ ու աստվածների բնակավայր Հարալի երկրի միջև: Նշված բոլոր ենթադրություններն, ինչ խոսք, կայիք ունեն հետագա հանգամանալի հիմնավորման. ներկայումս որոշակի է միայն Հարալիի՝ Հայկական լեռնաշխարհում գտնված լինելը:

Հարալիի վերաբերյալ հատուկ ուսումնասիրության հեղինակ Գ. Կոմորոցին այդ իրական երկրի առասպելականացումը բացատրում է երկու հիմնական պատճառներով՝ Շումերից ու Աքադից ունեցած մեծ հեռավորության և ոսկու հանքերով հարուստ լինելու: Վերջինս, քստ նրա, նույնպիսի առասպելականացման է հասցրել Նուբիա երկիրը եգիպտացիների

¹Տուգրիշի տեղադրության վերաբերյալ տե՛ս Բորդիյան, 1993, էջ 80-83:

²Komoroczy, 1972, p. 118; AD, vol. 6, 1956, p. 89.

³Մովսիսյան, 1992, էջ 43-44:

⁴Մովսիսի Խորենացույ, 1913, էջ 33:

պատկերացումներում, «ազնիվ ոսկի» ունեցող Եվրիան Հին Կտակարանում և այլն¹: Մեր կողմից ավելացնենք երրորդ գլխավոր պատճառը՝ այն, որ հին միջագետքյան պատկերացումներում Հայկական լեռնաշխարհը ներկայացել է իբրև աստվածաբնակ, սրբազան տարածք, որի վերաբերյալ փաստերի արդեն հանդիպել ենք և դեռ կհանդիպենք:

Իսկ պահպանվե՞լ է այդ երկրի մասին որևէ հիշողություն հայոց մեջ:

Մի կողմ թողնելով Հարալի-Հարք նույնության վերաբերյալ մեր ենթադրությունը՝ տեսնում ենք, որ հայոց դիցաբանական պատկերացումներում առկա են նման հիշողության հետքեր: Հայոց հին հավատքի համաձայն՝ մարտադաշտում զոհված հերոսներին հարություն էին տալիս «հարալեզ» («յարալեզ») կամ «արալեզ» կոչվող դիցաբանական էակները²: Դեռևս ուրարտագիտության հայր համարվող Ա. Հ. Մեյսը «արալեզ» անվան հիմքը կապում էր հին արևելյան աղբյուրներից հայտնի անդրաշխարհի՝ Արալիի (Հարալիի) հետ՝ վերջավորություն համարելով -եզ մասնիկը: Նրա հետ համաձայնելով՝ Գ.ր. Ղափանցյանը ցույց տվեց այդ մասնիկի առկայությունը հայերենի մի շարք կենդանական անվանումներում (խլեզ, բզեզ, յորեզ և այլն. հարալեզները ևս կենդանակերպ էին)³: Հետագայում այս բացատրությունն ընդունեցին ուրիշ գիտնականներ ևս:

Այսպիսով, տեսնում ենք, որ հին առաջավորասիական պատկերացումներում իբրև աստվածաբնակ ու սրբազան երկիր, իսկ հետագայում (կապված, թերևս, աստվածների սերնդափոխության գաղափարնկալման հետ) մաս անդրաշխարհ ներկայացող Հարալին իրական, պատմական մի տարածք է Հայկական լեռնաշխարհում: Վերջինիս բնակիչների դիցաբանության մեջ պահպանվել է նրա մասին հիշողությունը՝ անգամ քրիստոնեության ընդունումից տասնամյակներ հետո. հայտնի է, որ Մուշեղ Մամիկոնյանի դին նրա հարազատները դրել էին աշտարակի վրա՝ հավատարով հարալեզների հարություն տալու շնորհին⁴ ...

«ԱՍՏԾՈ ՊԱՏԿԵՐՈՎ ՈՒ ՆՄԱՆՈՒԹՅԱՄԲ»...

Աստվածաշնչյան պատմության համաձայն՝ արարչության վեցերորդ օրն Աստված արարեց մարդուն երկրի հողից (կավից)՝ իր պատկերով ու

¹Komoroczy, 1972, էջ 121-122: Հետաքրքիր է, որ հայոց մեջ ոսկեղեն են համարվել դրախտային Տիգրիսի ու Եփրատի ակունքները: Ըստ Գ.Սրվանձտյանցի գրառման՝ Տիգրիսի ակունքներում «ամենայն ինչ ոսկեղեն է: Արևուն ճառագայթը ոսկեփայլ: Թեք թռչնոց ոսկեգույն: Չայն երգոց հավոց ՚ի ձայն ոսկելար քնարի: Յողունք խտոց և բուսոց ոսկի: Ծաղկուք ամենայն և ամենուրեք ծաղկափյուռ, տերևն ոսկի, տեսիլն ոսկի»... (Սրվանձտյանց, 1978, էջ 392): Իսկ Արմ. Եփրատը սկիզբ է առնում Ոսկեանց լեռից:

²Արալեզների մասին հայ մատենագրության հաղորդումները՝ մանրամասն բնութայամբ՝ տե՛ս Մատիկեան, 1930, էջ 107-170; Ղափանցյան, 1944, էջ 28-34:

³Ղափանցյան, 1944, էջ 10-12, 30-31:

⁴Փավստոս Բուզանդ, 1968, էջ 276:

նմանությունը (Ճննդոց. 1. 26-28; 2. 7): Դրանով ավարտվեց արարչագրությունը: Աստված «արևելքի կողմում» անկեց դրախտը՝ Եդեմը, ուր և բնակեցրեց մարդկության առաջնեկներին: Եդեմից բխում էր մեծ գետ, որը բաժանվում էր չորս գետերի՝ Փիսուն, Գեհուն, Տիգրիս, Եփրատ: Առաջին երկու գետանունների պարզաբանման շուրջ ցայսօր վեճերը չեն դադարում, մինչդեռ Տիգրիսի ու Եփրատի ակունքների Հայաստանում գտնվելը բազմաթիվ գիտնականների հիմք է տվել Եդեմի Հայկական լեռնաշխարհում տեղայնացնելու¹: Այդ մասին է վկայում նաև Եդեմի տեղադրությունը «արևելքի կողմում», որի վերաբերյալ արդեն խոսվել է «Արևի երկիրը» բաժնում: Ավելացնենք, որ Աստվածաշնչում դրախտը ներկայանում է որպես «Աստծո սուրբ լեռ» (Եզեկիել, 28. 13-14), ինչից կարելի է եզրակացնել Եդեմի լեռնային վայր լինելը:

Եդեմի կարևոր բնութագրիչներից մեկը մայր գետն է, որը բաժանվելով ճյուղերի՝ ոռոգում է դրախտն ու շրջակա երկրները: Մայր գետի մասին պատկերացումները վկայված են նաև Հին Կտակարանից ավելի վաղ գրի առնված աղբյուրներում: Ուգարիթի (հյուս. Սիրիա) Ք. ա. 14-13-րդ դարերով թվագրվող բնագրերում գերագույն Աստված Իրուի կացարանը, որն ուգարիթյան հավատալիքների համաձայն՝ եղել է ոչ միայն գերագույն աստծո բնակատեղին և աստվածների ժողովի վայրը, այլև աշխարհարարման կենտրոնը², նկարագրվում է մեծ Գետի ակունքներում (ինչը համահունչ է աստվածաշնչյան պատկերացումներին):

«Գլիզամեշ» էպոսի արարչական տարբերակում ջրհեղեղից փրկված հերոսին աստվածներն անմահություն շնորհելով՝ բնակեցնում են «գետերի բերանի մոտ»³: Այստեղ «գետերի բերանը» նույնիմաստ է «գետերի ակունքի» հետ, քանի որ հնագույն միջագետքյան պատկերացումների համաձայն, գետերը (այդ թվում՝ Եփրատը, Տիգրիսը, նրանց ակունքը) բխում էին համաշխարհային ստորերկրյա օվկիանոսից, և այնտեղից երկիր արտահոսելու տեղը գետաբերան էր ստորերկրի ու ակունք երկրի համար⁴: Նույն աղբյուրը ներկայացնում է փրկված հերոսի բնակավայրը՝ անմահության երկիրը, որը Եփրատի վերին հոսանքի շրջանում էր, Մաշու (Մասիուս, Մասիուն) լեռներից հյուսիս⁵, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհում: Ուշագրավ է, որ ջրհեղեղի մասին պատմող շումերական բնագրում փրկված հերոսին աստվածները բնակեցնում են Թիլմուն (Դիլմուն) երկրում, «որտեղից ծագում է արևը»⁶: Արևի կացարանի, ծագման ու մայրամուտի

¹Եդեմի՝ Հայաստանում գտնված լինելու վերաբերյալ մինչև մեր դարասկիզբը հայտնված տեսակետների քննարկումը տես Ինճիճեան, 1835, էջ 244-271; Ալիշան, 1904, էջ 1-16, 249-254:

²Lipinski E., 1971, p. 41-57; Пирфман, 1987, с. 56, 85.

³ՀԱՊ, էջ 161; ПП/В, с. 217; ANET, p. 95; MM, p. 116. ՀԱՊ-ում նշված է «գետաբերանի մոտ», ինչը ճիշտ չէ, պետք է լինի «գետերի բերանի» մոտ:

⁴Հմմտ. Lipinski, 1971, p. 51.

⁵ՀԱՊ, էջ 143-144; ПП/В, с. 200-202; ANET, p. 88-89; MM, p. 97-98.

⁶The Deluge (tr. S.N.Kramer), ANET, p. 44; Крамер, 1965, с. 180; ETCSL, 1.7.4.

տեղի վերաբերյալ պատկերացումներին արդեն անդրադարձել ենք, իսկ Թիլմունի՝ շումերական դրախտի մասին խոսք կլինի հաջորդ բաժնում: Այստեղ միայն արձանագրենք, որ ջրհեղեղի պատմության շումերական և արադական տարբերակներում փրկվող հերոսը բնակություն է հաստատում դրախտում՝ գետի ակունքի կամ գետաբերանի մոտ, որն անմահության երկիրն էր (վերջինիս մասին մանրամասն տես «Անմահության որոնումներում. Հայոց երկրի ճանապարհը» բաժնում):

Մարդու արարման և աշխարհում նրա կոչման սյուժեներ ենք գտնում միջագետքյան մի շարք բնագրերում (գրի առնված Հին Կտակարանից դարեր առաջ), որոնցից առանձնապես նշելի են շումերական «Էնկի և Նինմախ»¹ և արադական «Ատրախասիս»² վիպասերը: Միջագետքյան ավանդության համաձայն, մարդու արարումից առաջ աստվածներն իրենք էին կատարում երկրային աշխատանքները: Ըստ շումերական «Էնկի և Նինմախ» վիպասքի՝ դա տեղի էր ունենում Հարալի երկրում: Դժվարություններով ու ծախսողություններով լի աշխատանքից ազատվելու նպատակով աստվածները ժողով են գումարում և խնդրում մայր դիցուհուն՝ ստեղծել մարդկային ցեղը, որը կաշխատեր ու կազատեր աստվածներին հոգսից: Նինմախ աստվածուհին համաձայնում է և աստվածներից իմաստնագույնի՝ Հայա-Էնկիի հետ ձեռնամուխ լինում մարդու արարմանը: Երկու աստվածները կավից ստեղծում են մարդուն և «կյանքի շունչ» հաղորդում նրան: Մարդու՝ կավից կերտվելով ու «կյանքի շունչ» ստանալով ստեղծվելու մոտիվը հետագայում արտացոլվել է նախաստեղծ Ադամի պատմության մեջ և տարածում գտել հին եբրայական, քրիստոնեական ու մահմեդական կրոնական պատկերացումներում: Ուշագրավ է, որ շումերական ավանդազրույցը փորձում է յուրովի մեկնաբանել մարդկանց արատավոր տեսակների ծագումը: Նշված վիպասքի համաձայն՝ մարդու արարումից հետո աստվածները հավաքվում են խնջույքի՝ նշելու նոր ստեղծագործության ծնունդը, որի ժամանակ հարբած արարչագործ աստվածները կրկին փորձում են մարդ ստեղծել: Հարբածության պատճառով ձախողվելով՝ նրանք ստեղծում են անկատար էակներ՝ չճննդաբերող կին, անսեռ մարդ և այլ արատներով մարդկանց տեսակներ: Այսինքն՝ ի ծնե արատավորությունը հին միջագետքյան աշխարհընկալումներում համարվում էր արարչագործության մեջ աստվածային սխալի արդյունք: Մարդկանց զույգերով ստեղծելով՝ աստվածները սահմանում են նրանց ճակատագիրը, որ այդ ու կին «այսուհետ հավիտյանս» ապրեն միասին, շարունակվի մարդկային ցեղը, որի կոչումն է մշակել հողը, զբաղվել անասնապահությամբ և այլ աշխատանքներով, ստացված բարիքների գոհաբերությամբ կերակրել աստվածներին, կառուցել նրանց պաշտամունքի տաճարներ և երկրպագել հա-

¹ETCSL, 1.1.2.

²Atrahasis (tr. E.A.Speiser, A.K.Grayson), ANET, p. 104-106, 512-514; MM (tr. St. Dalley), p. 1-38; "Когда воги, подобно людям..." (Сказание об Атрахасисе), ЯОТСС, с. 51-75 (пер. В.К.Афанасьевой).

են «Հացեաց դրախտ» կոչվող վայրը¹. ուր Գրիգոր Լուսավորիչը կատարել է հայոց գործի մկրտությունը: Հայտնի է, որ հայ իրականության մեջ քրիստոնեության մուտքն ամենուր ուղեկցվում էր նախորդ կրոնի ոչնչացմամբ և վերջինիս հիմքի վրա համանման քրիստոնեականի կառուցմամբ: «Հացեաց դրախտ» անվանումն իր մեջ կարող էր պահպանված լինել այդ վայրի դրախտի մասը կազմած լինելու մասին հիշողությունը, իսկ հենց այնտեղ հայոց գործի մկրտությունը՝ խորհրդանշել նոր կյանքի սկիզբը:

Դրախտի՝ Հայաստանում գտնված լինելու մասին է խոսում նաև Եղիշեն «Արարածոց մեկնություն» աշխատության էջերում՝ ելնելով Ատվածաշնչի մեկնության դիրքերից²:

Դեռ անցյալ դարում, ի մի բերելով Ատվածաշնչի, մատենագրական տեղեկությունների և ժողովրդական գրույցների տվյալները, Գևորգ Ալիշանը փորձել է տալ դրախտի տեղագրությունը՝ հանգելով հետևյալ պատկերին: Ըստ նրա, դրախտը գտնվել է Բարձր Հայք նահանգի և հարակից տարածքներում՝ հարավում սահման ունենալով Հայկական Տավրոսի լեռները, արևմուտքում՝ Եփրատը, հյուսիսում՝ Տայք նահանգի Պարտիզացփոր գավառը (գավառանվան մեջ Ալիշանը պահպանված է համարում Եղեմի պարտեզի մասին հիշողությունը), արևելքում՝ անցել Այրարատ և Տուրուբերան նահանգներով³ (տե՛ս քարտեզ II-ը): Եթե այսօր էլ մեր ունեցած տվյալները տեղադրենք քարտեզին, կատանանք նույն սահմաններն այն տարածքի համար, ուր հին առաջավորասիական պատկերացումների համաձայն, գտնվել է դրախտը, որում Աստծո պատկերով ու նմանությամբ արարվել են մարդկության առաջնեկները...

ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԳՐԱՆՏԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Նախորդ էջերում արձանագրեցինք, որ Հայկական լեռնաշխարհի Առաջավոր Ասիայի վաղագույն հոգևոր ընկալումներում պատկերացվել է իբրև մի տարածք, որում ի սկզբանե բնակվել են աստվածները, ուր և արարել են առաջին մարդկանց: Առաջիկա ակնարկներում մենք դեռ կտեսնենք, որ նույն պատկերացումներում Հայաստանն ընկալվել է ոչ միայն որպես մարդկության բնօրրան, այլև՝ վերածննդի երկիր (ջրհեղեղից հետո), ուր պահվում են անմահության ու իմաստության խորհուրդները: Աշխարհընկալումային այս համատեքստում, բավում է, թե շումերական աղբյուրներում իբրև դրախտ հանդես եկող Թիլմուն (Դիլմուն) երկիրը և առանց երկմրտանքի պետք է տեղադրել Հայկական լեռնաշխարհում: Սակայն այդ երկիրը հիշատակվում է միջագետքյան մի շարք ոչ դիցաբանական բնույթի

¹Մովսիսի Խորենացույ, 1913, էջ 272; Փավստոս Բուզանդ, 1968, էջ 96, 100:

²Խաչիկյան, 1992, էջ 245:

³Ալիշան, 1904, էջ 10:

բնագրերում (Զ.ա. 25-6-րդ դդ.)¹, որոնց քննությունը թույլ չի տալիս Թիլմունը Միջագետքից հյուսիս տեղադրել: Մտացվում է տարօրինակ մի իրավիճակ. մի կողմից Թիլմունը դրախտավայր է, անեղծ ու սրբազան երկիր, ուր բնակվում են աստվածները, մյուս կողմից (ոչ դիցաբանական բնույթի բնագրերում) այն ծովային առևտրի կենտրոն է, և արքաներն, անգամ նվաճելով, հարկատու են դարձնում այն: Ի՞նչ առեղծված է սա, և ո՞րն է դրա լուծումը:

Ոչ դիցաբանական բնույթի արձանագրությունների հիման վրա Թիլմունի ամենահավանական և ընդունված տեղորոշումը Պարսից ծոցի Բահրեյնյան կղզիներում է²: Թիլմունի վերաբերյալ հաղորդումների հակասությունը լուծելու նպատակով Փ. Քորնուոլը ժամանակին առաջադրեց մի վարկած, ըստ որի շումերական քաղաքակրթության նախակրողները բնակվել են Բահրեյնյան կղզիներում, ուստի դրանք շումերները համարել են դրախտ՝ կապված նախնիների պաշտամունքի հետ³: Սակայն միջագետքյան և բահրեյնյան միևնույն (ուրեղյան) մշակույթին պատկանող իրերի նեյտրոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջիններս ավելի ուշ շրջանի և բերված են Միջագետքից⁴: Հետևաբար, այս տարբերակով ևս անհնար է լուծել դիցաբանական Թիլմունի տեղորոշման խնդիրը: Նկատենք նաև, որ ոչ դիցաբանական բնույթի բնագրերում Թիլմունը սովորաբար հանդես է գալիս Մագան և Մելուխա երկրների հետ, ինչը չի հանդիպում դիցաբանական բնագրերում:

1914թ. հայտնաբերված ջրհեղեղի մասին հնագույն՝ շումերական բնագրի համաձայն, աղետից փրկված հերոս Ջիուսուդյան («շումերական Նոյ») աստվածների կամքով բնակեցվում է Թիլմունում, «որտեղից ծագում է արևը»⁵: Այս արտահայտությունը պատճառ է դարձել, որ որոշ ուսումնասիրողներ Թիլմունը տեղադրեն Շումերից արևելք և հասցնեն մինչև Հրդեհաստան⁶: Դա իրավացի լինել չի կարող, քանի որ, ինչպես տեսանք «Արևի երկիրը» բաժնում, շումերա-աքադական պատկերացումների համաձայն՝ արևը ծագում էր Մաշու (Մասիուս, Մասիուն) լեռներից և մայրամուտին վերադառնում այնտեղ: «Գիլգամեշ» էպոսում ևս ջրհեղեղից փրկված հերոսը բնակվում է Մաշու լեռներից հյուսիս: Այսինքն՝ ըստ հնագույն միջագետքյան հավատալիքների՝ Թիլմուն-դրախտը նույն անմահության երկիրն է, ուր հասնելու համար պետք էր հատրահարել «ճանապարհը դեպի Արատտա», իսկ վերջինս Հայաստանի տարածքում հիշատակված ա-

¹ Թիլմունի վերաբերող հիշատակությունների մասին տե՛ս Cornwall, 1946, p. 3f; Kramer, 1963(b), p. 112, 114, note 10 (և հղված գրականությունը); Бивен, 1984, с. 45-47, 170-175 և այլն:

² Այդ տեսակետի ձևավորման ողջ պատմության մանրամասները՝ սկսած 1879 թվից, տե՛ս Ջ. Բիբբիի վերոնշյալ աշխատության մեջ:

³ Cornwall, 1946, p. 4:

⁴ Lloyd, 1978, p. 62-64:

⁵ The Deluge (tr. S.N.Kramer), ANET, p. 44; Kramer, 1965, с. 180; ETCSL, 1.7.4.

⁶ Տե՛ս օրինակ՝ Kramer, 1963(b), p. 111-115:

ուսյին պետականությունն է: Եթե ասվածին ավելացնենք, որ Արատտան շումերական դյուցազնավեպում հայտնի է «աստվածային սուրբ օրենքների երկիր» մակդիրով, նաև համադրելի է Աստվածաշնչի Արարատի հետ՝ (որն, ինչպես և Եդենը, գտնվում էր «արևելքի կողմում»)։ հասկանալի կդառնա, որ շումերների անմահության երկիր-դյուսխոր նույն Արատտան է կամ երկուսն էլ գտնվել են Հայկական լեռնաշխարհում:

Ստանում ենք երկու Թիլմուն հին Առաջավոր Ասիայում. դիցաբանական Թիլմունը՝ Հայկական լեռնաշխարհում և պատմական (ոչ դիցաբանական) Թիլմունը՝ Բահրեյնյան կղզիներում (Ք. ա. 25-6-րդ դդ.): Երկու նույնանուն երկրների մասին տեղեկությունները միահյուսվել են միջագետքյան բնագրերում, ինչն էլ դարձել է հին արևելագիտության ամենից առեղծվածային խնդիրներից մեկի ծագման պատճառը: Իսկ կապ ունենում նույնանուն այդ երկրները: Եթե անունների համընկնումը պատահական չէ (ինչը քիչ հավանական է), կարելի է ենթադրել Հայկական լեռնաշխարհից բնակչության մի մասի արտագաղթ Բահրեյնյան կղզիներ, որի արդյունքում տեղի է ունեցել նաև տեղանվան փոխադրում: Ե՞րբ կարող էր կատարվել նման արտագաղթ: Վերջին սահմանագիծը կարող է լինել Ք.ա. մոտ 2500 թվականը, քանի որ այդ ժամանակվանից վկայված է Բահրեյնյան կղզիների Թիլմունը: Հնարավոր արտագաղթի ժամանակագրական առավել նախնական սահմանը կարելի է համարել Ք. ա. 6-5-րդ հազարամյակները, երբ շումերական քաղաքակրթության նախակրողները բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հարավային և Միջագետքի հյուսիսային շրջաններում (ինագիտության մեջ հայտնի Հասսունյան մշակույթի տարածաշրջանում):¹ Ի դեպ, շումերների համար Հայկական լեռնաշխարհի սրբազան լիներ կարող էր պայմանավորված լինել հենց նշված հանգամանքով կապված նախնիների պաշտամունքի հետ: Ժամանակագրական այսչափ մեծ ընդգրկման պայմաններում հնագիտության տվյալները թույլ են տալիս ավելի որոշակիացնել հնարավոր արտագաղթի ժամանակը: Տարիներ շարունակ Բահրեյնյան կղզիներում պեղումներ իրագործած Ջ. Բիբբին գրում է, որ այնտեղ հայտնաբերված վաղագույն շերտերը թվագրվում են Ք. ա. 28-րդ դարով²: Նույն այդ ժամանակաշրջանում է սկսվել Հայկական լեռնաշխարհից երբևէ կատարված մեծագույն արտագաղթներից մեկը, ինչի արդյունքում Հայաստանի վաղբունգեոլոգիայի (հայտնի է նաև Կուր-արաքսյան, Շենգավիթյան և այլ անուններով) մշակույթի կրողները հյուսիսում հասան Հյուսիսային Կովկաս, հարավում՝ Պաղեստին (վերջինիս Քիրբեթ-Կերակ հնավայրի անունով էլ հնագիտության մեջ կոչվում է տարածված մշակույթը)³: Ամենայն հավանականությամբ, այս իրողության հետ է

¹Մանրամասն տե՛ս Հավելված Ա-ում:

²В.К.Афанасьева, Первые земледельцы Нижней Месопотамии и Элама, ИЛВ, ч. 1, с. 66-75.

³Бивби, 1984, с. 346 (ժամանակագրական աղյուսակը):

⁴Խանգաղյան, 1967, էջ 91-94 (և հղված գրականությունը):

կապվում նաև Բահրեյնյան Թիլմունի հիմնումը: Ավելորդ չենք համարում նշել, որ Ք.ա. մոտ 28-րդ դարում Հայկական լեռնաշխարհից Միջագետքի հարավ կատարված արտագաղթը փաստվում է նաև շումերական գրավոր աղբյուրներով (դրան կանդրադառնանք այլ առիթով):

Կա կարծիք, որ Դիլմունը (Թիլմունը) պետք է նույնացնել Ուրմիտ լճից հյուսիս-արևմուտք գտնվող Դիլմանի դաշտավայրի հետ⁴: Նման եզրահանգումն արվել է՝ հիմք ընդունելով անունների նմանությունը, և չի բացատրվել Ք.ա. 25-6-րդ դարերի պատմական տեղեկությունների հետ հակասությունը: Բացի այդ, Դիլման տեղանունը չի հիշվում վաղ շրջանի աղբյուրներում և ենթադրվում է, որ այն ծագել է միջնադարում Հայաստան ներխուժած դելմիկների ցեղանունից⁵: Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ քիչ հավանական ենք համարելու Դիլմուն-Դիլման նույնացումը (հատկապես հինգ հազար տարում տեղանվան անփոփոխ մնալը)⁶:

ԱՆԴՐԱՇԽԱՐՀ

Սեպագիր դպրությունը ստեղծող շումերների լեզվում kur բառն ունի «լեռ, երկիր, լեռնային երկիր, քճամի երկիր, անդրաշխարհ» իմաստները⁴: «Լեռ» և «երկիր» բառերի համարժեքությունը մասնագետներին հիմք է տվել եզրակացնելու, որ շումերական նախահայրենիքն, ի տարբերություն Միջագետքի հարավի, եղել է լեռնային տարածք, իսկ նույն տերմինի վերաիմաստավորումն իբրև «քճամի երկիր» և «անդրաշխարհ», թերևս, հետագա պատմական իրադարձությունների ազդեցության արդյունք է: Հատկանշական է, որ kur-ը ոչ միայն հասարակ գոյական է, այլև որոշակի մի երկրի անվանում: Վերջինիս մասին տեղեկությունների ուսումնասիրությունը հետաքրքրական է հայագիտության տեսանկյունից, հատկապես, Հայաստանի մասին հնագույն պատկերացումների ամբողջացման առումով:

Կուրն, ըստ շումերա-աքադական աղբյուրների, չափազանց հեռավոր մի երկիր է: Այդ երկրի տեղորոշման հարցում մեզ օգնում են շումերական «Նիկուրթա աստծո սխարանքներն ու գործերը»⁵ և «Ինաննան ու Էբիխը»⁶ վիպաաբերը: Առաջինի համաձայն, Կուր երկրի իրեշատեսք մեծագուր Ա-

⁴Այդ տեսակետը բանավոր գրույցի ընթացքում մեզ է հայտնել Գևորգ Ջանոյանը: ²ՀՀՇՏԲ, հ. 2, Ե., 1988, էջ 113:

³Ենթադրում ենք, որ Հայաստանում Թիլմուն անվան հիշողությունը կարող է պահպանված լինել Կորդոքի Թման (նաև՝ Թմնիս) և Շոփի Թմնիս տեղանուններում: Շոփի Թմնիսը գտնվել է Եփրատի ափին և մտնում է Ալիշանի ուրվագծած դրախտի սահմանների մեջ, իսկ Կորդվաց աշխարհի Թմանը՝ Արարտու լեռան լանջին, որի հետ են կապվում համաշխարհային ջրհեղեղի մասին մի քանի հին ավանդազրույցներ:

⁴Kramer, 1961, p. 76; В.К.Афанасьева, Кур, МНМ, т. 2, 1992, с.29.

⁵van Dijk, 1983; Kramer, 1961, p.79-82; Kramer, 1965, с. 206-208; ETCSL, 1.6.2.

⁶Kramer, 1961, p.82-83; ETCSL, 1.3.2.

սագ (արադ. Ասակկու) աստծո դեմ մարտնչում է միջագետքյան պատերազմի ու երկրագործության աստված Նինուրթան, բայց պարտվելով «քոչունի պես» փախչում է: Ի վերջո, նրան հաջողվում է հաղթել Ասագին, որի կացարանը (անդրաշխարհ Կուրը) Տիգրիսի ակունքների շրջանն էր (Հայկական Տավրոս լեռնաշղթան): Միջագետքյան անդրաշխարհի տեղայնացումը լիովին համապատասխանում է հնագույն հայկական համարված կավատալիքներին: Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ միջագետքյան անդրաշխարհի տիրակալ Ներգալի անունը փոխարինված է Անգեղով (Թագավորաց Դ., 17,30), ինչը ցույց է տալիս վերջինիս նույն դերը կատարելը հայոց հին դիցարանում: Իսկ Անգեղի պաշտամունքի կենտրոնը՝ Անգեղ տուն գավառը գտնվում էր հենց Արևմտյան Տիգրիսի ակունքներում (Աղծնիք նահանգում):

«Ինաննան ու Էբիխը» վիպասքում ևս ներկայացվում է միջագետքյան աստծո պայքարն ընդդեմ Կուրի, որն այս անգամ հանդես է գալիս Էբիխ լեռան տեսքով¹: Վերջինս գտնվում է Լուլլուբի երկրում՝ Ուրմիտ լճից հարավ², ինչը ցույց է տալիս, որ, ըստ միջագետքյան հավատալիքների, այդ շրջանը ևս մտնում էր անդրաշխարհի վերգետնյա սահմանների մեջ: «Ոսկեքեր երկիրը Հարալի» բաժնում արդեն ասվել է, որ Հայկական լեռնաշխարհում գտնվող Հարալին ևս իրական պատմական տարածք լինելով նախ համարվել է աստվածների բնակավայր, ապա՝ անդրաշխարհ: Այդ առումով ուշագրավ է հին միջագետքյան աշխարհընկալումներում Հայկական լեռնաշխարհի աստվածայնության ընկալման երկակիությունը՝ և դրական, և բացասական բնորոշումներով: Ընդ որում, դրականը (աստվածների ու անմահության երկիրը, դրախտը) գտնվում էր հյուսիսում, իսկ բացասականը՝ նրանից հարավ, դրա համար էլ անմահություն դրոնող հերոսը Միջագետքից պետք է անցներ Մաշու լեռները, որն աստվածների ու մարդկանց աշխարհի սահմանագիծն էր, հաղթահարել մութ աշխարհն ու մահվան ջրերը և նոր միայն հասներ հավիտենական երանության երկիր: Նույնպիսի դիրք ունեն նաև դրախտն ու անդրաշխարհը հայկական հավատալիքներում. Բարձր Հայքը՝ հյուսիսում, Անգեղ տունը՝ հարավում (ավելի մանրամասն տես ստորև):

Փոքր-ինչ շեղվելով նյութից՝ ցանկանում ենք մեկ անգամ ևս ընդգծել շումերա-արադական աղբյուրների (այդ թվում՝ անդրաշխարհ Կուրին վերաբերող) ուսումնասիրության կարևորությունը հայագիտության համար և մի բանի նկատառումներ, որոնք կարող են զարգացվել հետագայում: Ասագ (Ասակկու) աստվածը, որի կացարանը (ինչպես պաշտամունքի գլխավոր կենտրոնը) Հայկական Տավրոսն էր, կարող էր հայաստանյան բազում այլ աստվածների նման իր անունը բողոքել Հայոց Բուն տոմարում. Հայկական օրացույցի ամսվա 17-րդ օրանունն է «Ասակ»³: Հայաստանի տարբեր

¹Kramer, 1961, p. 82-83; ETCSL, 1.3.2.

²Լուլլուբի մասին տես Klengel, 1966, S. 349-371:

³Անանիա Շիրակացի, 1979, էջ 257:

վայրերում պահպանվել են «ասակ» հիմքով բազմաթիվ տեղանուններ: Հնարավոր է ենթադրել նաև այս դիցանվան կապը Աստվածաշնչում Հայաստանին տրված «Ասքանազյան» անվան հետ. ըստ Ծննդոց գրքի (10, 3), Թորգոմն ու Ասքանազը եղբայրներ էին: Սրանց կողքին անհետաքրքիր չէ նշել, որ, ըստ Ղևոնդ Ալիշանի բերած վկայության, հայերը հնում կոչվել են «սակեր» (հմմտ. Սկայորդի=Հայկազն, (հ)սկայք=հայք)⁴: Իսկ Ասագի ծննդյան պատմությունը բազմաթիվ մանրամասներով բնագրային նմանություններ ու համապատասխանություններ ունի Վահագնի ծննդյան հիմնի հետ (համադրումը՝ Արմեն Պետրոսյանի): Կուրի հետ կարող է առնչվել Հայկական լեռնաշխարհում Վանի թագավորության և ավելի վաղ ժամանակաշրջաններում մեծ տարածում ստացած հնդեվրոպական Կուենա աստծո պաշտամունքը⁵ (թեպետ այդ մասին հրատարակված աշխատանքներ չկան, նման կարծիքի են մեր գիտնականներից շատերը): Կուենան Կուառ անվամբ հիշվում է Ջենոբ Գլակի և Հովհան Մամիկոնյանի կողմից՝ որպես Վահագն-Գլխանեի և Աստղիկ-Անահիտ-Դեմետրի ավագ որդին⁶: Թերևս կարելի է շարունակել թեմային վերաբերող նկատառումների շարքը (որոնց մի մասը կարող է և մերժվել հետագայում), սակայն ասվածը բավարար համարելով՝ անցնենք համաշխարհային ջրհեղեղի մասին ավանդապատումներին:

«ԵՐԲ ՋՐՀԵՂԵՂԸ ՍՐԲԵՅ ԱՍԵՆ ԲԱՆ»...

Աշխարհակործան ջրհեղեղի մասին բազմաթիվ հիշատակումներ են պահպանվել տարբեր մայրցամաքներում ապրող ժողովուրդների ավանդազրույցներում⁴: Դրանց մեջ առանձնանում են մի խումբ պատմություններ, որոնք սյուժետային մանրամասներով առավել մոտ ու կապված լինելով՝ գրի են առնվել հին Առաջավոր Ասիայում:

Մեծ ջրհեղեղի մասին գրի առնված հնագույն պատմությունը շումերականն է, որը գիտական աշխարհին հայտնի դարձավ 1914 թվականին⁵: Մինչ այդ՝ 1872 թվականին, Ջ. Սմիթը հրատարակել էր ջրհեղեղի մասին բաբելոնյան (արադական) պատումը՝ «Գլղամեշ» էպոսի 11-րդ պնակիտը⁶, որն իր մանրամասներով գրեթե նույնանում է Աստվածաշնչի պատմության հետ: Երկու պատմությունների համաձայն էլ մարդկանց սրբապղծությունը սպառում է աստվածային համբերությունը, ինչի արդյունքում մարդկությունը դատապարտվում է կործանման՝ ջրհեղեղով: Սակայն

⁴Ալիշան, 1904, էջ 55-57:

⁵Կուենա-Կուառի պաշտամունքի մասին տես Հմայակյան, 1990, էջ 152-166:

⁶Դիցանունների համարժեքության վերականգնումը տես Խալաթյան, 1893, էջ 20-27, 54-60; հմմտ. Հմայակյան, 1990, էջ 154-160:

⁴Դրանց մեծագույն մասը տես Փրեզեր, 1985, c. 63-159:

⁵ANET, p. 42-44; Крaмep, 1965, c. 175-180; ETCSL, 1.7.4.

⁶ՀԱՊ, էջ 155-165; ПП/ВВ, c. 211-220; ANET, p. 88-89; MM, p. 109-120.

աստվածային ամենատես ու այդպիսի անհատական աչքից չեն խոստովանում մի քանի բարեպաշտներ, որոնք փրկվում են տապանով՝ հանգրվանելով լեռան կամ լեռների վրա: Ջրհեղեղի ավարտը փրկվածներն իմանում են տապանից թոշումներ արձակելու միջոցով:

Աստվածաշնչում փրկության վայրը Արարատի լեռներն են (Ծննդոց, 8, 1-4), իսկ «Գլոգամեշ» էպոսում՝ Նիմուշ (այլ ընթերցմամբ՝ Նիսիր)¹ լեռը Հայկական լեռնաշխարհի հարավում: Որ միջագետքյան և նրանից ծագող ավանդություններում Հայաստանն է հանդես գալիս որպես փրկիչ տարածք, ակնհայտ է նաև Բերոսոսի (որի մասին խոսվել է «Աստվածների մոտ՝ Հայաստան» բաժնում), Ալեքսանդր Բագմավելի, Աբյուդենոսի², Հիերոնիմոս Եգիպտացու, Մնասեասի, Նիկողայոս Դամասկոսցու, Հովսեպոս Փլավիոսի, Եվսեբոս Կեսարացու և այլոց հաղորդումներից³: Ուշագրավ է, որ դուրանյան ջրհեղեղի պատմությունը ևս (նույնպես առաջավորասիական ծագում ունեցող) Հայաստանի հարավը՝ Ջուղի լեռն է համարում փրկության վայրը. «Եվ ջուրը նվազեց, կատարվեց Աստծո դատաստանը, և այն (տապանը - Ա.Մ.) կանգ առավ Ջուղի լեռան վրա» (Դուրան, 11, 47): Նույն շրջանում է հանգրվանում տապանը նաև Խորենացու վկայակոչած Ոլիմպիոդորոս Փիլիսոփայի հին անգլիո գրույցներում⁴: Իսկ ասորեստանյան սեպագիր լեզուներում Կորդվաց լեռների տարածքում հիշատակվում է Արարատ լեռը⁵:

Ջրհեղեղի մասին շումերական բնագրում, թերևս վնասվելու պատճառով, բացակայում է փրկարար տարածքի անունը: Բարեբախտաբար, այդ բացթողումը հնարավոր է լրացնել շումերական մեկ այլ բնագրի հաղորդմամբ, որում Արատտա երկրի ժողովրդին տրվում է հետևյալ բնորոշումը.

Նրանք, որ կանգնեցին ջրհեղեղի մեջ,

¹Ավանդաբար ընդունված է տեղանվան Նիսիր (Նիցիր) ընթերցումը, սակայն ելնելով որոշ փաստերի առկայությունից՝ առաջարկվել է ավելի նախընտրելի համարվող Նիմուշ ընթերցումը (Lambert, 1986, p. 185-186):

²Ալեքսանդր Բագմավելի և Աբյուդենոսի հատվածները (որոնց սկզբնաղբյուրը Բերոսոսն է) մեզ են հասել Եվսեբոս Կեսարացու երկի միջոցով. Ալեքսանդր Բագմավելի՝ «... և եթե տեղին՝ յորում վայրի ելեալ կային, Հայոց աշխարհն է»: Աբյուդենոս՝ «... և նաև երթեալ յաշխարհն Հայոց դադարեր. և, ի փայտից դեղ օգնականութեան բնակչաց աշխարհին պարզներ» (տե՛ս Եսեբի Պամփիլեայ Կեսարացու, 1818, էջ 18 և 25): Հիերոնիմոս Եգիպտացու («որը գրել է Փյունիկիայի հնախոսությունը»), Մնասեասի տեղեկությունների մասին մեզ հաղորդում է Հովսեպոս Փլավիոսը, որը մեջբերում է նաև մի հատված Նիկողայոս Դամասկոսցու երկից (Հովսեպոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, էջ 54-55): Ն. Դամասկոսցու հաղորդմանը կանդրադառնանք Հավելված Բ-ում:

³Եվսեբոս Կեսարացու, Հիերոնիմոսի, Եվստատիոս Անտիոքցու, Հովհան Ռակեբրանի, Թեոդորեոսի, Իսիդոր Սևիլացու, Եպիփանի մեկնաբանական երկերի համապատասխան հատվածները՝ հղումներով՝ տե՛ս Ինգլիզեան, 1947, էջ 9-21:

⁴Մովսիսի Խորենացու, 1913, էջ 25-26: Մովսես Խորենացի, 1981, էջ 105-106:

⁵Հիշատակվում է Աշուրնասիրապալ II-ի կողմից (նաև Արարադի, Արբեղի տարբերակներով), տե՛ս Льяконов, 1951, N 2, с. 285, 289, прим. 12:

այն ժամանակ, երբ ջրհեղեղը սրբեց ամեն բան¹...

Արատտան Հայկական լեռնաշխարհի մինչ օրս հայտնի առաջին պետությունն է (վկայված Ժ.ա. 28-րդ դարից), որը թե՛ անվամբ, թե՛ տեղագրություն և թե՛ ջրհեղեղի հետ կապված ավանդույթամբ գուցադրելի ու նույնական է Աստվածաշնչի Արարատի հետ: Արատտա-Արարատը փրկիչ երկիր է հանդիսանում ինչպես շումերական, այնպես էլ աստվածաշնչյան աշխարհընկալումներում: Ընդ որում, Աստվածաշնչի համաձայն՝ Արարատի լեռներում կնքվեց Աստծո և մարդկության հավիտենական ուխտը. որի խորհրդանշանը դարձավ ծիածանը (Ծննդոց, 9, 12-13)...

Գալով փրկարար տապանի հանգրվանատեղին՝ նշենք, որ թե՛ հին հեղինակները և թե՛ սերնդետերունդ փոխանցված ավանդազրույցները մատնանշում են իջման երկու շրջան՝ Հայաստանի հարավը (Կորդվաց լեռներ) և լեռնաշխարհի կենտրոնում գտնվող Մեծ Մասիս-Արարատը: Սկզբնաղբյուրների մի խումբ էլ պարզապես նշում է, որ փրկության նավակ իջել է Հայաստանի լեռներում՝ առանց որոշակիացնելու տեղը: Երեք դեպքում էլ վկայում է հնագույն առաջավորասիական հոգևոր ընկալումներում Հայաստանի հանդես գալն իբրև մարդկության վերածննդի երկիր, նոր մարդկության հայրենիք: Ջրհեղեղից հետո մարդկության վերապրումը յուրօրինակ մի նոր արարչագործություն էր, և ոչ պատահականորեն այն տեղի է ունենում մարդկության արարման վայրում՝ Հայկական լեռնաշխարհում: Պատահական չէ նաև, որ հնում մի շարք ժողովուրդների դիցա-վիպական պատկերացումներում առաջին մարդու ծննդավայրն ու ջրհեղեղից փրկվելու տեղը համարվել են երկրի պորտը, ուր գտնվում էր աշխարհի առանցքը, որը և աշխարհի կենտրոնն էր²: Հենց այդպիսի ձևակերպմամբ է պահպանվել ջրհեղեղի պատմությունը Թովմա Արծրունու մոտ. «Աստվածային հրամանը կատարվելուց հետո ալեծուփ ջրերը տապանը բերեցին արևելք՝ աշխարհի կենտրոն, և այն նստեց Կորդվաց լեռներին: Եվ նահապետը գոհության գոհեր մատուցեց Աստծուն, որը խոստացավ այլևս նույնը չհաստուցել աշխարհին, հավիտենական ուխտ հաստատեց՝ «Իմ ալեղը պետք է դնեմ ամպի մեջ», որը ծիածանն է, որ ոմանք համարում են ամպից գատված հուր, իսկ կռապաշտների որդիները՝ Արամագդի գոտի»³...

Աշխարհակործան ջրհեղեղի մասին ավանդազրույցներ են գոյություն ունեցել նաև նախաքրիստոնեական Հայաստանում: Մի գրույցի համաձայն՝ հայոց Արամագդ և քաղղեացվոց Թրուջան աստվածների միջև թշնամություն կար, և Արամագդը հաղթելով՝ ջրախեղդ արեց Թրուջանին⁴ (սա, թերևս, Հայաստան-Միջագետք հնագույն հարաբերությունների արտացոլումն է դիցաբանության լեզվով): Մեկ այլ պատմի համաձայն՝ Ծիր Կաթինը երկնքի պատվածքն է, որից թափվել է ջրհեղեղը երկրի վրա և բո-

¹Kramer, 1952, p. 42-43; Канева, 1964, с. 218; Cohen, 1973, p. 140.

²Топоров В.Н., Пуп земли, МНМ, т. 2, 1992, с. 350.

³Թովմա Արծրունի և Անանուն, 1985, էջ 32-33:

⁴Ալիշան, 1904, էջ 44:

ղկ իր հետքը երկնքում՝ ի տես մարդկանց¹ : Հայկական ավանդությունը յուրօրինակ մի փառաբանություն-օրհներգ է Մեծ Մասիսին. փրկարար տապանին հայոց լեռները խորհուրդ են տալիս գնալ դեպի մայր լեռը, որ մեծ ու բարձր է բոլորից² :

Քրիստոնեության ընդունումից հետո հայկական ավանդազրույցները (որոնց մի մասը մոռացվեց) միաձուլվեցին աստվածաշնչյան պատմության հետ, և ձևավորվեց մի նոր ավանդավեպ, որը դեռևս կարիք ունի համակողմանի ուսումնասիրության (տե՛ս նաև Հավելված Բ-ում) :

ԱՄՍԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ. ՀԱՅՈՑ ԵՐԿՐԻ ԴԱՆԱՊԱՐՀԸ

Աստվածաշնչի հայտնի պատմության համաձայն՝ Աստված Եդեմի կենտրոնում տնկեց կենաց, բարու և չարի իմացության ու բազմաթիվ մրրգատու ծառեր՝ պատվիրելով ուտել միայն մրգատու ծառերի պտուղները : Օձի միջամտության շնորհիվ առաջնատեղը մարդիկ ճաշակեցին բարու և չարի իմացության ծառի արգելված պտուղը, բացվեցին նրանց աչքերն, ու աստվածների նման նրանք ճանաչեցին բարին ու չարը : Եվ զգուշանալով, որ մարդիկ կճաշակեն նաև կենաց ծառի պտուղը, կանմահանան ու կաստվածանան, Աստված վտարեց մարդկանց դրախտից և դեպի կենաց ծառը տանող ճանապարհներին պահպան դրեց քերովքներին ու բոցեղեն սուրը (Ծննդոց, 2,8-3,24) :

Աստվածաշնչյան ընկալմամբ՝ աստվածայինն ու կենդանականն միջև կա երկու խոշոր անջրպետ՝ իմաստությունն ու անմահությունը : Երկու աստվածային հատկանիշները խորհրդանշող սրբազան ծառերն աճում էին դրախտում (որն արարչագործության ու աշխարհի կենտրոնն էր), որի տեղադրությունը Հայկական լեռնաշխարհում հայտնի է վաղուց : Ուստի, Հայաստանի մասին աստվածաշնչյան պատկերացումների շարքում (դրախտ, մարդկության վերածննդի երկիր, Աստծո և մարդկանց հավիտենական ուխտի երկիր) պետք է ընդգծել իմաստության ու անմահության խորհուրդներ կրելը և :

Արդեն նշվել է, որ Հին Կտակարանի մի շարք սյուժեների ու պատկերացումների ակունքները կապվում են հին Միջագետքի հետ : Բացառություն չեն կազմում նաև իմաստության ու անմահության խորհուրդներին առնչվող քեմաները : Թե՛ Աստվածաշնչում և թե՛ միջագետքյան հնագույն բնագրերում մարդը հասու է լինում միայն իմաստությանը (օժտվում բանականությանը), բայց մնում է մահկանացու՝ միջին դիրք գրավելով աստվածա-

¹Ղանանայան, 1969, էջ 7, 420:

²Ղանանայան, 1969, էջ 12, 24, 26, 54: Ուշագրավ է, որ այս սյուժեն տարածվելով՝ ընկել է ջրհեղեղի «կովկասյան տարբերակի» հիմքում, ըստ որի տապանը նախ քվել է Կազբեկ լեռան կողմը և երկու կեսի բաժանել նրա գագաթը, հետո հասել Արարատ լեռանը և դադար առել նրա վրա (Ղանանայան, 1969, էջ ԾԿԴ) :

յինն ու կենդանականն միջև : Գրանով նա, սակայն, չդադարեց անմահության ձգտելուց, և հավիտենական կյանքի որոնումը դարձավ մարդու մշտական ուղեկիցը : Հնագույն միջագետքյան ավանդության մեջ անմահությունը որոնող գլխավոր հերոսը Գիլգամեշն է, որի մասին ասքերը գրի են առնվել հին աշխարհի բազմաթիվ լեզուներով : Շումերական «Գիլգամեշն ու անմահության երկիրը» վիպերգում Գիլգամեշը որոշում է ուղևորվել անմահության երկիր, որին հասնելու համար Ռիթու (Արև) աստվածը նրան տալիս է «դեպի Արատտա ճանապարհը ցույց տվող» յոթ ուղեցույցներ¹ : «Գիլգամեշ» էպոսի խեթական տարբերակում հերոսն ընկերոջ հետ մեկնում է անմահության որոնման՝ Եփրատի հոսանքն ի վեր² : Իսկ էպոսի բաբելոնյան տարբերակում Գիլգամեշը հաղթահարում է Մաշու լեռներն ու տասներկու ասպարեզ ձգվող քանձր խավարը, հասնում դրախտ հիշեցնող քարերի այգին, ապա անցնում մահվան ջրերը, հանդիպում ջրհեղեղից փրկված ու անմահություն ստացած հերոսին, նրա շնորհիվ ձեռք է բերում «անմահության ծաղիկը», որը վերադարձի ճանապարհին նրանից գողանում է օձը³ : Ուշագրավ է, որ Աստվածաշնչում ևս մարդկությունը մահկանացու է դառնում օձի միջամտության հետևանքով :

Գիլգամեշի հետ կապված անմահության մասին պատկերացումները Առաջավոր Ասիայում պահպանվում են բավականին երկար. անմահության որոնման սյուժեում Գիլգամեշին փոխարինում է Ալեքսանդր Մակեդոնացին : Անմահության հասնելու համար Ալեքսանդր Մեծն, ըստ հունական վեպի (գրի առնված Զ.ա. 240թ.), բռնում է «ճանապարհը դեպի Հայոց երկիր, որտեղ ակունքն է Եփրատի ու Տիգրիսի»⁴ : Նա հասնում է հրաշք-երկիր, ապա անցնում մութ աշխարհով, հանդիպում օրհնյալ մեկին և հասնում կենաց աղբյուրին : Իսկ Ալեքսանդրի մասին սիրիական վեպում նրա ճանապարհին հիշվում է Մասիս լեռնաշղթան⁵ : Փաստորեն հին արևելյան և հելլենիստական վիպական ավանդություններում «դեպի Արատտա ճանապարհը» փոխարինվում է «դեպի Հայոց երկիր ճանապարհով», Մաշու լեռները՝ Մասիս լեռնաշղթայով, երկու դեպքում էլ հերոսը գնում է դեպի Եփրատի (ու Տիգրիսի) ակունքները, անցնում խավարով, դրախտ հիշեցնող վայրով, ապա մութ աշխարհով կամ մահվան ջրերով, հանդիպում աստվածընտրյալ հերոսին և ստանում անմահություն : Իրականում երբևէ Հայաստան չմտած Ալեքսանդր Մակեդոնացին վիպական ավանդության մեջ բռնում է նրա ճանապարհը⁶, քանի որ հին առաջավորասիական

¹ՊՄ/Ը, c. 131; հայերեն թարգմանությունը՝ «Գարուն», 1994, N 4, էջ 90:

²MM, p. 127, note 32.

³ՆԱՊ, էջ 163-165; ՊՄ/Ը, c. 218-220; ANET, p. 88-89; MM, p. 119.

⁴Lipinski, 1971, p. 46:

⁵Lehmann-Haupt, 1927, S. 797-798; Lipinski, 1971, p. 47; Тираев, 1924, c. 262-263; Ինգլիզեան, 1947, էջ 120:

⁶Նշենք, որ հայկական ավանդազրույցներում պահպանվել են և՛ Մակեդոնացու Հայաստան գալու, և՛ «մութ աշխարհով» «լույս աշխարհ» հասնելու, «անմահական ջուր» ձեռք բերելու սյուժեները (Ղանանայան, 1969, էջ 279-282, 472) :

հոգևոր քնկալումներում մեր երկրի հետ էին կապված դրախտայինին և անմահությանը վերաբերող պատկերացումները¹։

Նախորդ էջերում անդրադարձել ենք դրախտի՝ ըստ հին առաջավորասիական մի շարք աղբյուրների՝ Հայկական լեռնաշխարհում տեղորոշվելուն։ Նշվել է նաև, որ հայկական աղբյուրների համաձայն՝ դրախտը գտնվել է Բյուրակնի լեռների, Բարձր Հայքի ու հարակից շրջաններում։ Այդ տարածքի հետ են կապվում անմահության մասին բազմաթիվ հայկական ավանդագրություններ, որոնց համաձայն Բյուրակնում էր աճում անմահության ծաղիկը (խտոր) և բխում անմահության աղբյուրը։ Դրանք կենդանացնում էին մեռյալին, բուժում անհույս հիվանդին, վերադարձնում կույրի տեսողությունը²։ Հատկանշական է, որ հայկական հնագույն պատկերացումներում դրախտ-անդրաշխարհ տեղայնացումը նույնն է, ինչ առաջավորասիական վերոհիշյալ գրություններում։ Անմահության երկիր-դրախտը գտնվում էր անդրաշխարհից հյուսիս, և հարավից եկող անմահությունն որոնող հերոսը նախ պետք է անցներ անդրաշխարհով։ Վերջինս, ըստ հայոց վաղնջական հավատալիքների, գտնվել է Հայկական Տավրոսի լեռնազանգվածում, Անգեղ տուն գավառի տարածքում։ Միջագետքյան աղբյուրներում իբրև անդրաշխարհի հանդես եկող Կուրը ևս տեղայնացվում է Հայկական Տավրոսում՝ Տիգրիսի ակունքների շրջանում։ Գլխամեջը նախ անցնում է Մաշու (Մասի(ու)ս-Մասիան) լեռները, որոնք ձգվում են Հայկական Տավրոսի հարավով, հաղթահարում խավար տարածությունը, դուրս գալիս հեթիաբային քարերի այգին, ապա անցնում մահվան ջրերով և հասնում նպատակակետին³։ Մաշու լեռներից հետո տասներկու ասպարեզ տարածվող խավարը, ինչպես ցույց է տվել Կ.Ֆ.Լեհման-Հաուպտը դեռևս տասնամյակներ առաջ, Տիգրիսի բնական թունելն է, որի ելքի մոտ գտնված ասորեստանյան սեպագիր արձանագրություններում նշվում է այդ տարածքի՝ Տիգրիսի ակունքն ու «արևի ելքի և արևամուտի հզոր լեռները» լինելը⁴։ Քարերի այգու պատկերը հիշեցնում է Աստվածաշնչի Նոյնի և Դանիելի մարգարեության (28, 13-14) դրախտի նկարագրությունը։ Իսկ մահվան ջրերի ու մոթ աշխարհի տարածքը նույնանում է հայոց անդրաշխարհի՝ Անգեղ տան հետ։ Այն հաղթահարելուց հետո միայն հարավից եկողը

¹Հունական աղբյուրներում հիշվող Այա երկիրը, որտեղ իշխում էր արևի որդին և պահվում Ոսկե Գեղմը, մեծ հավանականությամբ, նույնացվում է Հայասա-Հայքի հետ (Ջահուկյան, 1987, էջ 285; Պետրոսյան, 1997, էջ 86-89; Մարտիրոսյան, 1997, էջ 24)։ Այա երկրի Ոսկե Գեղմը կապվում է խեթական աղբյուրներից հայտնի մշտադալար Էա ծառի հետ, որից կախված ոչխարի գեղմը խորհրդանշում էր բոլոր բարիքները (ՄՄԿ, Կ. 61)։

²Ղանանայան, 1969, էջ 21-22, 422։ Նախաքրիստոնեական հայ իրականության մեջ կենաց ծառի և անմահության ծաղիկի պաշտամունքի մասին կարող են վկայել մինչև 19-րդ դարի վերջերը պահպանված արևորդիների համայնքները, որոնք երկրպագում էին արևը, բարդին ու շուշան ծաղիկը (Բարտիկյան, 1967, Կ. 102-112)։

³ՀԱՊ, էջ 143-165; ՍՊԼԵ, Կ. 200-220; ANET, Կ. 88-97; MM, Կ. 96-120.

⁴Lehmann-Haupt, 1910, S. 430-462.

կարող էր հասնել հայոց դրախտաշխարհ՝ Բարձր Հայք և Բյուրակն։

Այսպիսով, թե՛ սյուժետային մանրամասների և թե՛ աշխարհագրական տեղայնացումների քննությունը ցույց է տալիս, որ հնագույն ժամանակներում Առաջավոր Ասիայում ստեղծվել և հեղինակվել դարաշրջանում գոյություն է ունեցել անմահության մասին պատկերացումների մի համակարգ, որի համաձայն՝ հավիտենական կյանքի խորհուրդը պահվում էր Հայկական լեռնաշխարհում, ուստի և անմահություն տեղաշարժը հերոսին վիճակված էր անցնելու ճանապարհը դեպի Արատտա՝ Հայոց երկիր...

ԵՐԿԻՐՆ ԻՍՏԱՍՏՈՒԹՅԱՆ

Միջագետքյան հնագույն բնագրերի ու Աստվածաշնչի գաղափարա-սյուժետային առնչակցությունն ակնհայտ է նաև նախասկզբնական իմաստության թեմատիկայում։ Ինչպես նշվեց, բարո և չարի իմացության ծառն, ըստ Հին Կտակարանի, գտնվել է Եդեմում՝ Հայկական լեռնաշխարհում, ուր և առաջին մարդիկ հաստ են դարձել իմաստությանը (Ծննդոց, 3, 1-7)։ Այդ առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի շումերական բնագրերից մեկի հաղորդումը, որն իմաստության ու արվեստի ծագումը կապում է Հայկական լեռնաշխարհի հետ. «Իմաստությունն ու արվեստը ցած բերվեց Արատտայից»¹։

Հին միջագետքյան դիցաբանությունը Հայոց լեռնաշխարհի հետ է կապում աստվածներից իմաստագույնի՝ արարչագործ, իմաստության, համաշխարհային օվկիանոսի ու ստորերկրյա ջրերի աստված Հայա-Էնկիի պաշտամունքը։ Նրա գլխավոր կացարանը գտնվում էր Աբգուում, որի վերերկրյա շրջանների՝ Հայկական լեռնաշխարհում գտնված լինելու մասին խոսվել է «Արարչագործության կենտրոնը» բաժնում։ Միջագետքյան հավատալիքների համաձայն՝ Աբգուում էին բնակվում յոթ իմաստունները, որոնց Հայա-Էնկին ուղարկեց քաղաքակրթություն տարածելու մարդկանց մեջ։ Նրանցից հատկապես հայտնի է Օաննեսի պատմությունը (շնորհիվ Բերոսոսի գրառման), որը մինչ այդ կենդանիների մման ասպող Բաբելոնի ժողովրդին սովորեցրեց գիր, գիտություններ, շինարվեստ, երկրագործություն և այլն²։ Շումերական աղբյուրներում իբրև քաղաքակրթության բնօրրան է հանդես գալիս նաև Հարալի երկիրը (տե՛ս «Ոսկեբեր երկիրը Հարալի» բաժնում)։

Ի մի բերելով ասվածը՝ տեսնում ենք, որ արարչագործության կենտրոն, մարդկության ծննդի ու վերապրումի վայր, դրախտ ու անդրաշխարհի հանդիսացած և անմահություն շնորհող մեր լեռնաշխարհն, ըստ միջագետքյան պատկերացումների, եղել է նաև քաղաքակրթության բնօրրանը...

¹Alster B., Studies in Sumerian Proverbs, 1975, p. 128, n. 32(ըստ Berlin, 1983, p. 22)։

²MM, Կ. 182-183; Schnabel, 1923, S. 253-256; B.K.Афанасьева, Оаннес, МНМ, т. 2, Կ. 234.

ՐԱՐԵՊԱՇՏ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ՝ ՍՈՒՐԲ ՕՐԻՆԱՅ ԵՐԿՐՈՒՄ,
ՀԱՅԱ ԱՍՏԾՈՆ ՈՐԴԻՆԵՐԸ

Շումերական դյուցազնավեպում Արատտան հանդես է գալիս «աստվա-
ծային սուրբ օրինաց երկիր» պատվանուն-մակդիրով¹: «Աստվածային
սուրբ օրենքներ» (շումերերեն «մե») ասվածի տակ հասկացվում էին ոչ թե
պարզապես օրենքները, այլ այն մեծագոր սրբազան ուժերը, որոնք կառա-
վարում էին ողջ տիեզերքը, աստվածային ու մարդկային իրականության
բոլոր ոլորտները: Այդ իսկ պատճառով առաջարկվում է շումերերեն «մե»
բառը թարգմանել «եություն, լինելություն»²: «Աստվածային սուրբ օրենք-
ները» տիրակալն, ըստ շումերա-աքադական դիցաբանության, Հայան
(Էնկի) էր՝ աստվածներից իմաստնագույնը, որի պաշտամունքն, ինչպես
նշվել է, կապվում էր Հայկական լեռնաշխարհի հետ:

Միջագետքյան գրականության հատորդումների համաձայն՝ սրբազան
մեր լեռնաշխարհում, ուր տեղի էին ունեցել աշխարհարարման գլխավոր
իրադարձությունները և պահվում էին տիեզերքը կառավարող սուրբ օրենք-
ները, անմահության ու իմաստության խորհուրդները, բնակվում էին ոչ թե
սովորական մասկանացուներ, այլ՝ բնորոշ ժողովուրդ: Այդ մասին վկա-
յություն է պահպանել շումերական դյուցազնավեպը.

Ժողովուրդն (Արատտայի), որ առավել է մյուս ժողովուրդներից,
Ժողովուրդը, որին Դումուզին ընտրեց մյուս ժողովուրդներից...³

Սա «ընտրյալ ժողովուրդ» հասկացության բացառիկ մի կիրառություն
է ոչ միայն ժամանակի վաղեմության առումով, այլ հատկապես նրանով,
որ «ընտրյալ» է համարում ոչ թե ժողովուրդն ինքն իրեն (ինչպես հրեաներն
ու ճապոնացիները)⁴, այլ՝ օտարը նրան, ընդ որում, հակառակորդ լինելով:
Իսկ դա նշանակում է, որ մեր նախնիների աստվածընտրյալ լինելու մասին
պատկերացումը գոյություն է ունեցել և ճանաչվել նաև Հայկական լեռնաշ-
խարհի սահմաններից դուրս:

Եւոյն սկզբնաղբյուրը տեղեկություն է պահպանել աստվածընտրյալ մեր
նախնիների՝ սեփական ճանապարհի գիտակցություն՝ առաքելություն
ունենալու մասին, որը վկայվում է Արատտայի տիրակալի խոսքում.

Երբ պասկն Արատտայի՝
Բարեգութ լաման⁴ սուրբ օրինաց երկրի,

¹Շումերերեն kur-me-siki-lu արտահայտությունը թարգմանվել է տարբեր կերպ
(տե՛ս օրինակ Kramer, 1952, p. 21; Канева, 1964, с. 208, 210; Cohen, 1973, p. 123;
Berlin, 1979, p. 57 և այլն): Քանի որ «մե» էին կոչվում աստվածային օրենքները,
մենք նախընտրում ենք «աստվածային սուրբ օրինաց երկիր» թարգմանությունը:
²B. K. Афанасьева, Me, MHM, т. 2, 1992, с. 127.

³Kramer, 1952, p. 43; Канева, 1964, с. 218; Cohen, 1973, p. 140 (թարգմանությունն-
ներում կան ոչ էական տարբերություններ. մենք հետևել ենք վերջին երկուսին):

⁴Լամա է կոչվել հովանավոր աստվածությունն ընդհանրապես: Այս բնագրի մեկ
այլ հատվածում (տող 221-225) նշվում է, որ Արատտայի տիրակալը նշանակված է
իշխելու «տիեզերքի տիրուհու» Ինաննայի «սուրբ ձեռքով», ուստի հնարավոր է,

Երկնային լուսե պսակի նման որոշեց ճանապարհն Արատտայի.
Այնժամ ես իմ մեծության մասին հաստատ իմացա...¹

Հին առաջավորասիական բնագրերը պահպանել են լեռնաշխարհի հետ
կապված և «հայա» հիմքով ցեղանվան ու տեղանունների բազմաթիվ հի-
շատակություններ: Մասնավորապես «հայա» ցեղանուն և տեղանուն են
բազմիցս հիշվում Էբրայի (Միդիայի հյուսիսում, Ք.ա. 24-23-րդ դդ.) բնա-
գրերում, ընդ որում, առնչված նաև Արմի ու Ազի հայաստանյան քաղաքների
հետ²: Միջագետքյան բնագրերում Սուբուր (Սուբարի) երկրանվանը
համարժեք հանդես եկող տեղանունը «Հայա երկիրն (քաղաքը)» է³: «Հայա»
ցեղանունը հիշվում է Ք.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծով
թվագրվող Աշուրից գտնված մի բնագրում⁴: Իսկ խեթական ար-
ձանագրություններում Ք.ա. 15-13-րդ դդ. հիշատակվում է Հայասա երկրա-
նունը, որի -(ա)սս վերջավորությունը խեթական տեղանվանակերտ մաս-
նիկ է⁵: Համակարգի մեջ դիտելիս՝ ակնհայտ է մեր լեռնաշխարհի հետ
կապվող Հայա աստծու անվան, շումերա-աքադական, էբրայական, հին ա-
շուրական և խեթական աղբյուրների «հայա» ցեղանվան ու նրանով
կազմված տեղանունների և հայ ժողովրդի ինքնանվան ծագումնաբանա-
կան ընդհանրությունը:

Հայա աստծու կապը Հայկական լեռնաշխարհի հետ առավել ընդգծվում
է նրա որդու՝ բնության ու գալթոնքի աստված Դումուզիի՝ Արատտա երկրի
հովանավոր աստվածը լինելով: Ուշագրավ է, որ միջագետքյան Դումուզի-
ժամնուգր համապատասխանում է Օրիոնին, որն Աստվածաշնչի հայերեն
թարգմանության մեջ (Հոբ, 9, 9) փոխարինված է Հայկով⁶: Այսինքն՝ Ա-
րատտայի հովանավոր աստվածը եղել է Հայկը: Հայայի որդի Դումուզիի
անունը նշանակում է «հարազատ (խկական) որդի», իսկ «Հայկ» անունը
կազմված է «հայ(ա)» ցեղանունից (կամ դիցանունից) և -իկ մասնիկից
(հմմտ. հնդ-իկ, պարս-իկ և այլն), նշանակելով «հայ(ա)» ցեղի (կամ աստ-
ծու) ներկայացուցիչ, որդի: Հայա (Էնկի) աստվածը շումերա-աքադական
դիցաբանության մեջ արարչագործության գլխավոր դեմքերից է, իսկ Հայկ
նահապետի մասին Մար Աբաս Կատինայի մատյանից քաղելով՝ Խորենա-
ցին գրում է. «Աստվածներից առաջիններն ասել էին և երևելի, և աշխարհի
մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի ու բազմամարդության սկիզբ:
Սրանցից առաջ եկավ հսկաների սերունդը... Սրանցից մեկն էր և Հայե-
տտոսյան Հայկը»⁷...

որ «բարեգութ լաման» ևս վերաբերի Ինաննային (հմմտ. հետագայի հայկ. Անահի-
տին), որը Դումուզիի սիրեցյալն ու կինն էր:

¹Kramer, 1952, p. 23; Канева, 1964, с. 211-212; Cohen, 1973, p. 125.

²Иванов, 1983, с. 31-33; Մովսիսյան, 1993, էջ 119-121:

³Gelb, 1944, p. 31, 94-96.

⁴Иванов, 1983, с. 30-31.

⁵ՀԺՊ, էջ 190-194 և գրականությունը (բաժնի հեղինակ՝ Մ.Ս. Երեմյան):

⁶Մատթեոսեան, 1993, էջ 304:

⁷Մովսես Խորենացի, 1981, էջ 109:

Ամեն բան կարծես իր տեղն է ընկնում, և մեր առջև բացվում է հայոց ծագումնաբանության մտազգված կարևորագույն մի էջ: Ըստ այդմ, մենք սկսում ենք արարչագործ, աստվածների մեջ իմաստնագույն Հայ(ա) աստծուց, որի որդին էր դյուցազն Հայկը¹: Նրա անունը նշանակում էր Հայ(ա)ի որդի, ներկայացուցիչ, այսինքն՝ հայ, ուստի և ինչպես Պատմահայրն է վկայում, նրա անունով կոչվեցինք բոլորս (Հայկ=հայ, Հայկք=Հայք-Հայաստան): Իսկ աստծո անունով ժողովրդի ու երկրի անվանակոչումը հայտնի երևույթ է հին աշխարհում (օրինակ՝ Աշոր աստծո անունով՝ Աշոր երկիրը, մայրաքաղաքը և ժողովուրդը)...

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈՒՍԱՐԵՆ

Ավարտելով աշխատանքը, որն առաջին փորձն է՝ ի մի բերելու Հայաստանի մասին Առաջավոր Ասիայում տարածված վաղնջական պատկերացումների առանձին դրվագները, մեկ անգամ ևս նշենք, որ այն չի հավակնում սպառնիչ և վերջնական լինելու, ընդգրկելու առկա ողջ նյութը: Բերված նյութն էլ, սակայն, լիովին բավարարում է ուրվագծելու հին առաջավորասիական հոգևոր ընկալումներում Հայոց երկրի և ժողովրդի կերպարը: Դրանց համաձայն՝ մեր լեռնաշխարհը, նախքան մարդկության արարումը, եղել է աստվածների բնակության վայր, այստեղ է գտնվել դրախտը, որում արարվեց մարդկությունը, այստեղ էր գտնվում կենսատու արևի կացարանը: Մեղսագործ մարդկության կործանումից հետո կրկին մեր երկիրը դարձավ մարդկության վերածննդի վայրը, ուր կնքվեց Աստծու ու մարդկանց հավիտենական ուխտը: Մեր երկրում են պահվել անմահության ու իմաստության խորհուրդները, տիեզերքը կառավարող սրբազան օրենքները: Աստվածային այդ երկրում մայրելու մենաշնորհն ունեին բարեպաշտ մեր նախնիները, որոնք ընտրյալներն էին բնության ու զարթոնքի աստծո, որդիներն արարչագործ իմաստնագույն Հայա աստծո, որի անունով էլ, թերևս, կոչվեց մեր ժողովուրդը...

Մեր երկրի՝ սրբազան և ժողովրդի՝ աստվածընտրյալ լինելու մասին պատկերացումները շարունակեցին գոյատևել նաև քրիստոնեական շրջանում, չնայած, որ Աստվածաշնչում ընտրյալ են համարվում հրեաները:

Եղիշեն, նկատի ունենալով դրախտի տեղը վկայող երկու գետերը (Եփրատն ու Տիգրիսը) և տապանը, որպես մարդկության վերածննդի խորհուրդանիշ, մեզ գերադասելի է համարում շատ ուրիշներին. «Երկու գետով եւ տապանան գեր ի վերոյ ենք քան գյուղս: Եւ թէ զի՞նչ օգուտ է, նախ՝ իմաստ-

¹Հին արևելյան սեպագիր աղբյուրներում հիշատակվող Հայա աստվածը նույնացվել է հայոց անվանողի նախնի Հայկի հետ (Եսայան, 1985, էջ 84-93; Մովսիսյան, 1992, էջ 40-41; Փիլիպոսյան, Քամայան, 1997, էջ 67-69): Դումուզի-Օրիոն-Հայկ համադրումը և վերոնշյալ փաստերը ստիպեցին մեզ վերանայել այդ տեսակետը և հանգել Հայկի՝ Հայայի որդին լինելու կարծիքին: Հայան իր հերթին համարվել է նախաստեղծ օվկիանոսի Նամմուի (հմմտ. հայկ. էպոսի Ծովինարին) որդին:

տուրեան պատճառ է մեզ, անմուռաց պահելով զԱստուծոյ արարչութեան, եւ ակն ունել փովոխմանն ի նոյն, ապա եւ՝ երիս բարեխօսս ունինք առ Աստուած»¹...

Գրիգոր Նարեկացու «Հարության տաղում» քրիստոնեական ողջ աստվածաբանությունը խորհրդանշող սայլի ճանապարհը դեպի Երուսաղեմ սկսվում է Մեծ Մասիսից. «Սայլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց ... եւ ճոնչալով գայր մտանէր յԵրուսաղեմ»²...

Հովհաննես Իմաստասերը, նշելով հայերի և հրեաների աստվածընտրյալ լինելը, ընդգծում է հայերի առաջնությունը հրեաների նկատմամբ. «Արդ՝ զարժումն ամսոց երթայեցոց եւ զանշարժութիւն հայ ամսոցդ սահմանեաց Բարձրեալն, զի հաւատ, եւ զիր եւ տումար այս երկու ազգիս միայն ետ Աստուած, եւ այլոց ազգացդ՝ մարդկան են արարեալ. զիրս հայոց՝ աստ ի վերայ վիմի հրեղին աջով, անդ՝ ի տախտակս քարեղենս, գտովմարս՝ անդ Մովսէս, աստ՝ Հայկն, յառաջ քան զնա, զհավատս՝ անդ ի լեռնէ՝ ի վայր պատգամաւ, աստ՝ ի վերայ վիմի ոսկի ուռամբ ինքն Աստուած»³...

Միջնադարում հայոց պետականության անկմանը հաջորդեցին տառապանքի ու ստրկության դարեր, երբ օտարները տիրելով մեր երկրին և նպատակ ունենալով նախ հոգեբանորեն, ապա և ֆիզիկապես ոչնչացնելու մեզ, մեր ժողովրդին ներարկեցին անկատարության ու թերաբժեքության բարոյություններ, ինչի հետևանքները զգալի են և այսօր: (Բնագիտակցում ենք, որ ստրկամտության դարավոր (և այսօր էլ շարունակվող) քարոզչության հենքի վրա այս գրքույկը կարող է պիտակվել որպես ազգային սնապարծության սերմանում, ուստի մեկ անգամ ևս ընդգծենք, որ մեր եզրակացություններն արվել են նախևառաջ դրացի ժողովուրդների գրավոր հիշատակությունների հիմամբ):

Մեր պատմության մեծագույն ճգնաժամը հաղթահարված է: Տիեզերքում գործող օրինաչափության համաձայն՝ ամեն բան վերադառնում է «ի շրջանս յուր»: Ուստի և հավատում ենք, որ նոր դարաշրջանում մեր ժողովրդի ճանապարհը պետք է ընթանա դեպի իր սկզբնական վեհությունը...

¹Խաչիկյան, 1992, էջ 245:

²Գրիգոր Նարեկացի, 1981, էջ 59-65:

³Աբրահամյան, 1956, էջ 223:

Ա. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒԹՅՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԾԱԳՈՒՄՆԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԳԻՐԸ

Համեմատական լեզվաբանության արդի տվյալները ցույց են տալիս, որ հայերենը, լինելով հնդեվրոպական մայր լեզվի հայ-հունա-արիական բարբառախմբի ներկայացուցիչ, ինքնուրույն լեզու է դարձել Բ. ա. 3-րդ հազարամյակի սկզբներին¹, իսկ վաղնջական հայերենի կրողները Բ. ա. 3-2-րդ հազարամյակներում բնակվել են Հայկական բարձրավանդակում²: Հաստատվում են լեզվաբանության տվյալները հնագույն գրավոր վկայություններով: Այս բաժնում կփորձենք հարցի պատասխանը տալ միայն այն չափով, թե սկսած Բ. ա. 3-րդ հազարամյակից փաստված են արդյոք Հայաստանին տրված անվանումները հնագույն գրավոր աղբյուրներում:

Սկզբնաղբյուրների քննությանն անցնելուց առաջ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նույն երկիրն ինչպես տարբեր ժողովուրդների, այնպես էլ դպրության գանազան կենտրոնների կողմից կարող էր կոչվել մի քանի անուններով: Վաղ միջնադարի հայ պատմագրությունն, օրինակ, ճանաչում էր Հայաստանին տրված մի քանի անվանումներ՝ Հայք, Արարատ/դ, Արմենիա, Թորգոմա տուն (նաև «Ասքանագյան ազգի» երկիր), որոնք գալիս էին տարբեր ակունքներից: Ուստի մեր խնդիրներից մեկն էլ պիտի լինի պարզաբանել՝ Հայկական լեռնաշխարհի սահմաններում վկայված երկրանունները վերաբերել են տարբեր քաղաքական միավորումների, թե՞ միևնույն երկրի տարանվանումներ են:

ԱՐՄՍՍԱ ԵՎ ՍՈՒԲՈՒՐ (ՇՈՒԲՈՒՐ, ՇՈՒԲԱՐՏՈՒ). Հայկական լեռնաշխարհի մասին առաջին պատմական տեղեկությունները վկայում են Արատտա անվանք պետության գոյությունը, որը հիշատակվում է շումերական բնագրերում՝ Բ. ա. 28-27-րդ, ապա 22-րդ դարերի իրադարձությունների կապակցությամբ: Նախ քննության առնենք Արատտա երկրի տեղադրմանը վերաբերող տվյալները³:

«Էնմերքարը և Էնսուխքեշղաննան» վիպերգի համաձայն՝ Արատտայից

¹Джаукян, 1967, с. 330-332; Шпироков, 1980, с. 80-93; Ջահուկյան, 1987, էջ 24-25:
²Шпироков, 1980, с. 80-93; Гамкрелдзе, Иванов, 1984, I, с. 393-428.
³Արատտան հիշատակվում է շումերական դյուցազնավեպի առաջին հինգ վիպերգերում, «Ինաննան և Էրիխը» ասքում, Գուդեայի արձանագրություններում և այլուր: Արատտայի տեղագրության խնդիրն, մասորդ տեսակետներին անդրադարձել ենք մեր «Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա» (Երևան, 1992) գրքում (էջ 10-23): Դրանից հետո Արատտայի հայաստանյան տեղադրությանն է անդրադարձել Վ.Մատթեոսյանը (Մատթեոսյան, 1995, էջ 284-303): Նշված հարցի վերաբերյալ տեղեկությունները չեն սահմանափակվում այդքանով և այստեղ կրկնենք առկա այլ փաստեր և:

Շումեր ռազմական արշավանք է իրականացվել «Ուրուկի գետով»⁴, որը, բնականաբար, պետք է լիներ Եփրատը: Սկզբնաղբյուրներից հայտնի է Արատտայի բարձր լեռնային երկիր լինելը, իսկ Ուրուկից մինչև Հայկական լեռնաշխարհի հարավը եզերող Մասիուս / Մասիոն լեռները ձգվող տարածքում ամենաբարձր կետը չի անցնում 1000 մետրից: Հետևաբար, Արատտան պետք է փնտրել նշված լեռների և ավելի հյուսիս ընկած լեռնային տարածքում, Եփրատի վերին հոսանքի շրջանում:

Շումերական «Լուգալբանդան լեռան քարայրում» և «Լուգալբանդա» վիպերգերում⁵ Շումերից Արատտա ճանապարհին հիշատակվում է Ջամուա երկիրը, ինչը ենթադրում է Արատտայի՝ Շումեր - Ջամուա գծի շարունակության վրա գտնված լինելը: Ջամուա երկիրը գտնվել է Ջագրուսի հյուսիսային շրջանում⁶, Ուրմիտ լճից հարավ: Այսինքն՝ Արատտան պետք է փնտրել Ուրմիտ լճի ավազանում և / կամ հարակից շրջաններում:

Շումերից Արատտա ճանապարհին հիշվում է մի վայր ևս՝ hur-ru-um-kur-ra, որը սկզբնապես վերձանվում էր որպես Խուտում (յմա՝ խուռիների) երկիր⁷, իսկ Բ. Վիլքեն առաջարկեց այն ընթերցել որպես հասարակ անուն՝ «լեռան քարայր» իմաստով⁸: Առաջին մեկնաբանության դեպքում, ելնելով այն հանազամանքից, որ Բ. ա. երրորդ հազարամյակի առաջին կեսին խուռիները պետք է բնակվեին Միջագետքի հյուսիսում և դրանից արևելք ընկած շրջաններում, հավանական է Արատտայի տեղադրությունը Միջագետքից հյուսիս տարածվող լեռնային շրջանում: Բայց քանի որ հնարավոր է hur-ru-um-kur-ra -ի այլ մեկնաբանություն, այս փաստը չենք օգտագործի խնդրի լուծման նպատակով:

Լուգալբանդայի վիպաշարքը տալիս է մի կարևոր փաստարկ ևս՝ Շումերից Արատտա ճանապարհին հիշատակելով Խաշուր լեռը⁹: «Խաշուր» նշանակել է մայրու մի տեսակ և ունի չորս կիրառություն, որոնցից մեկն իբրև լեռնանուն հանդես գալն է: Ըստ շումերական մեկ այլ բնագրի՝ Խաշուր լեռը գտնվել է Եփրատի ավազանում. «Եփրատի ջրերը, որ ակունքներից հոսում են դեպի լեռը Խաշուր»⁷... Ուստի և Արատտան պետք է գտնվեր Եփրատի ավազանի հյուսիսում:

Շումերական դյուցազնավեպի «Գիլգամեշ և Էնսուխքեշղաննան երկիրը» վիպերգում (որը դարձել է «Գիլգամեշ» էպոսի գաղափարաստեղծության

⁴Kramer, 1956, p. 232-234; Berlin, 1979, p. 48-49; ETCESL, 1.8.2.4. Վիպերգի վերնագրի երկրորդ անձնանունը հղված երեք աղբյուրներում ունի տարբեր ընթերցումներ՝ Էնսուրուշիբաննա, Էնսուխքեշղաննա, Էն-սուխքի-անա: Վերջին երկու աղբյուրում նշված հատվածը թարգմանվել է այլ կերպ, բայց անփոփոխ է մնացել ջրային ճանապարհով արշավանքի փաստը:
⁵Kramer, 1956, p. 235-238; Wilcke, 1969; ETCESL, 1.8.2.2.
⁶Арутюнян, 1985, с. 78.
⁷Տե՛ս օրինակ Kramer, 1963(a), p. 275:
⁸Wilcke, 1969, S. 36-38.
⁹Wilcke, 1969, S. 90-129.
⁷AD, vol. 6, 1956, p. 147.

ակզբնադրյալը) անմահության գաղտնիքին հասնելու համար Արե (շունը, Ուրու) աստվածը Գիլգամեշին շնորհում է «դեպի Արատտա ճանապարհն իմացող» յոթ մոզական էակներ¹ : «Գիլգամեշ» էպոսի խեթական տարբերակում անմահության հասնելու համար Գիլգամեշն յոթ լմկեր էնկիլուփի հետ գնում է Եփրատի հոսանքն ի վեր², իսկ արադական (քաբեռնյան) տարբերակում հաղթահարում է Մաշու լեռները, որոնք վաղուց նույնացվել են Հայկական լեռնաշխարհի հարավը եզերող Մասիուս / Մասիոն լեռների հետ : Ուշագրավ է, որ ինչպես «Գիլգամեշ» էպոսի «անմահության ծաղիկն» է համադրվում Ծննդոց գրքի «կենաց ծառին», այնպես էլ երկու աղբյուրներում նույնն է դրանց գտնվելու վայրը Հայոց լեռնաշխարհը :

Արատտայի հայաստանյան տեղադրության օգտին է վկայում ջրհեղեղի ավանդությանը վերաբերող դավազող դյուցազնավեպի առաջին՝ «Էննեքարը» և Արատտայի տիրակալը» («Էննեքարը» և Արատտայի գերագույն քուրմը») վիպերգում, որում Արատտայի ժողովրդին տրված է հետևյալ բնութայինը.

Նրանք, որ կանգնեցին ջրհեղեղի մեջ,
այն ժամանակ, երբ ջրհեղեղը սրբեց ամեն բան³ ...

Ի մի քերեղով ասվածը տեսնում ենք, որ ուրվագծվում է Արատտայի տեղորոշման առնվազն երկու շրջան՝ Եփրատի ավազանի ելուսիսը և Ուրմիու լճի ավազանը : Հատկանշական է, որ նույնպիսի պատկեր է ստացվում Ք.ա. 26-րդ դարից հիշատակվող Ս/Շուբուր-Ս/Շուբարսու երկրանվան տեղագրական քննության արդյունքում⁴ :

Մեպագիրը և հիերոգլիֆ արձանագրություններում հատուկ անունները վանկայինից բացի կարող էին ունենալ նաև գաղափարանշանային գրություն : Եվ Արատտա-Սուբուր համընկնումը նոր իմաստավորում է ստանում, երբ գաղափարանշանային գրության պարագայում «Արատտան» գրվում է «Սուբուրի» գաղափարագրային տարբերակով՝ SU.KUR.RU⁵ : Նույն երկրանվան գրության վանկային և գաղափարանշանային տարբերակները վկայում են Արատտա-Սուբուր նույնության մասին, ինչը մի կարևոր հավելյալ փաստարկ է հոգուտ Արատտայի հայաստանյան տեղորոշման : Արատտա-Սուբուր նույնությունը կարող է հաստատվել այլ փաստերով ևս, որոնց կանդրատունանք մեր առաջիկա աշխատանքներում :

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում երկու երկրանունների առավել հավանական ստուգաբանությունները, մասնավորապես, եթե նկատի ունենանք շումերական բնագրերում Արատտային տրված «սուրբ օրինաց երկիր» պատվանուն-մակդիրը : «Արատտա» անունը ստուգաբանելի է հնդեվրոպական -*arto արմատից, որից հայ-հունա-արիական բարբառա-

խմբերի լեզուներում առաջացել են «սուրբ օրենք», «կայգ», «սուրբ իրավունք», «արդար», «բարեպաշտ», «ճշմարիտ» և այլ բառերը⁶ : «Սուբուր» անունը (իր տարբերակներով) մեծ հավանականությամբ կարելի է ստուգաբանել հնդեվրոպական -*kubhro ձևից, որից ծագում են սանսկրիտի cubhra «փայլուն, պայծառ, գեղեցիկ, մաքուր», հայերենի՝ սուբր, որից ր-ի դրափոխությամբ (հմմտ. նուրբ>նուրբ, լիբր>լիբր և այլն) ստացվել է սուբր («անարատ, մաքուր, նվիրական, սուրբ») բառը⁷ : Հնդեվրոպական նախադեզվում սրբություն, նվիրականություն, օրինականություն ցույց տվող արմատներից առաջացել են նույն երկրի երկու անվանումները : Ավելորդ չենք համարում նշել, որ միջագետքյան որևէ բնագրում երկու երկրանունները չեն հիշվում կողք-կողքի, ինչը ևս կարող է ցույց տալ, որ դրանք ոչ թե տարբեր (հարևան), այլ միևնույն երկրին տրված անվանումներ են :

ՍՈՒԲՈՒՐ (ՇՈՒԲԱՐՏՈՒ-ՇՈՒԲՐԻԱ) ԵՎ ԱՐՄԱՆ(Ի/ՈՒՄ)-ԱՐՄԻ/Ե Վաղուց նկատվել է, որ բիսյանական (ուրարտական) աղբյուրների Արմե երկիրը նույն սասուրա-բարեյական արձանագրությունների Շուբրիան է : Այսինքն Վանի թագավորության ժամանակաշրջանում այս երկու անունները արվել են նույն երկրին, ինչի հիման վրա էլ մասնագիտական գրականության մեջ և ուսումնական ձեռնարկներում այն ստացավ Արմե-Շուբրիա բաղադրյալ անվանումը⁸ : Մյուս կողմից, Շուբրիա երկրանունն իրավամբ նույնացվում է Ք.ա. 3-2-րդ հազարամյակների Ս/Շուբուր-Ս/Շուբարի-Ս/Շուբարտուին, իսկ Արմեն առաջարկվել է նույնացվել Ք.ա. 3-2-րդ հազարամյակների Արման(ի/ում), Արմի, Ուր(ու)մե, Արամ, Արմանա, Արիմե երկրանունների հետ : Վերջին նույնացման հարցը դարձել է երկարատև բանավեճի առարկա՝ մինչև օրս չգտնելով վերջնական լուծում (հատկապես Ք.ա. 3-րդ հազարամյակին վերաբերող հարցերում)⁹ : Շուբուր-Շուբարի-Շուբարտու-Շուբրիա նույնությունը կասկած չի հարուցում, և եթե սկզբնաղբյուրների քննությամբ պարզվի, որ նույնական են Արման(ի/ում), Արմի ... և Արմե երկրանունները, ապա կարելի է եզրակացնել, որ ինչպես Ք.ա. 1-ին հազարամյակի Արմեն և Շուբրիան, այնպես էլ Ք.ա. 3-2-րդ հազարամյակների նրանց նախորդները եղել են միևնույն երկրի տարբեր անվանումները : Ուստի, կարևոր այդ խնդրի պարզաբանման համար նպատակահարմար ենք գտնում անդրատունալ Արման(ի/ում), Արմի և Արամ(ե) երկրանունների տեղայնացմանը :

Արադի արքա Նարամ-Սուենի (Ք.ա. 23-րդ դար) արձանագրություններում Արմանում (-ում մասնիկը արադերենի ուղղական հոլովի վերջավորությունն է, նույն արքայի մասին պատմող խեթական բնագրում երկրանունն է «Արմանի») երկրի նվաճումը ներկայացվում է լրբուն աննախադեզ

¹ՊՈՒԼԵ, c. 130-135.

²MM, p. 127, note 32.

³Kramer, 1952, p. 43; Кацева, 1964, c. 219; Cohen, 1973, p. 140.

⁴Gelb, 1944 (քարտեզը՝ վերջում) :

⁵Deilmel, 1932. S. 839; Labat, 1988, p. 250.

⁶Մովսիսյան, 1992, էջ 30-31 (Հր. Մարտիրոսյանի ստուգաբանությունն է) :

⁷Աճառյան, հ. IV, 1979, էջ 255-256; Ջահուկյան, 1987, էջ 57-58, 132, 222 :

⁸Տե՛ս օրինակ ՎՏՊ, հ. I, 1971, էջ 423-435 :

⁹Ինդրիևի նվիրված վերջին աշխատանքները՝ գրականության հղմամբ՝ տե՛ս Մովսիսյան, 1993, էջ 113-127; Մատթեոսեան, 1994, էջ 255-268 :

լի համարել Արմանուսի արքայի «տրարյան» անունը՝ Մադարինա (Մադակինա)¹: Հատկանշական է նաև այն, որ ինչպես Արատտան և Ս/Շուրուր, այնպես էլ Ս/Շուրուր (Ս/Շուրարտուն) և Արման(ի/ու)՝ չեն հանդիպում նույն արձանագրություններում, տարբեր երկրներ լինելու դեպքում դրանք, իբրև հարևաններ կամ տարածքով մոտ գտնվողներ, զոնե մեկ անգամ կիշատակվելին միևնույն բնագրում:

Կարելի է շարունակել փաստերի վկայակոչումը, սակայն կայծուծ ենք, որ քերական էլ քավական է, ցույց տալու համար Արման(ի/ու)-Արմի/ե երկրի Հայկական իռնաշխարհում և հարակից հարավային շրջաններում տարածված լինելն ու նույնակերտությունը Մուրուր-Մուրարտուի հետ:

URUSSU, UNKURU TU URANAB-NUŠA TURANAKENNERE ZESUQU URUR-ORUŠENENNUŠA: Կատարված համառոտ քննությունը ցույց է տալիս, որ Արատտան, Մուրուր (Մուրարտուն) և Արման(ի/ու)՝ նույն երկրի տարբեր անվանումներն են Ք. ա. 3-րդ հազարամյակում: Ուշագրավ է, որ երեք երկրանուններին վերաբերող ավյալների առանձին-առանձին ուսումնասիրություններն որվագծում են նույն այնպիսի Հայկական իռնաշխարհից Եփրատի արտանախի շրջան, Գանա լճի ավազան և Ռարմի լճի ավազանի հարավակողմ: Եման մեծ քնդգրկման շնորհիվ է, որ Արման(ի/ու)՝ երկրանունը տարածվեց հարևան ժողովուրդների շրջանում և դարձավ ալլազգիների կողմից (բազի վրացիներից ու քրդերից) այսօր հայերին ու Հայաստանին արված քնդհանրական անվանումը: Այս անվան առավել քնդունելի ստուգաբանությունը, մեր կարծիքով, Գ. Բ. Ջահուկյանի առաջարկածն է՝ բնիկ հայերեն *արմն, գ-արմ* «ցեղ, սկզբունք, արմատ, հիմք» արմատից²: Արատտա անունը խորհրդանշել է արդարություն, բարեպաշտություն, սուրբ կարգ ու օրենք, Մուրուր՝ սրբություն և նվիրականություն, Արման(ի/ու)՝ տոհմիկ ազնվագարմություն, մեծ խորհուրդներ, որոնք մեր նախնիները դրել են հայրենի երկրի անվանումներում:

Արատտա անունը հետագա դարերում և Արարատ, և՛ Ուրարտու տարբերակներով շարունակվում է կիրառվել Հայաստանի նկատմամբ: Հատկանշական է, որ Աստվածաշնչի Յորանանից քարգնամության մեջ Երեմիայի մարգարեության Արարատ քաղաքությունը հիշատակվում է «Արատե քաղաքություն» տարբերակով³ (մի փաստ, որը հանիրավի անտեսվել է): Արատտա երկրանունը իր հետքն է բողեկ Եփրատի A.RAT, Urattu, Urattu⁴, Ռարմի լճի ավազանի հարավում գտնվող Aratta գետի⁵ և քաղաքի վայր անվանումներում: Հնարավոր է, որ Ուրարտու անունը, որի զարգացումը կարծես քե երևում է Ք. ա. 13-9-րդ դարերի ասուրա-բաբելոնական արձանագրություններում՝ Ur(u)atri/u>Uratu ճանապարհով, առաջա-

ցած լինի Արատտա անվանը -ու տեղանվանական մասնիկի կամ -ro անցնցի հավելումով, ապա Ե-ի դրափոխությամբ (տես վերը) ստանա իր վերջնական տեսքը Aratri (Uratri/u>Aratri/u(Urattu)):

Հանրահայտ փաստեր են, որ Աստվածաշնչի քարգնամություններում Արարատը փոխարինված է Արմենիայով, Բեկիսրունի եռալեզու արձանագրության (Ք. ա. 6-րդ դար) մեջ համարվեք են պարսկերենի Արմինան, Էլամերենի Խարմինույան և բաբելոներենի Ուրաշտուն⁶: Ընդ որում, վերջինս մինչև Ք. ա. 4-րդ դարի առաջին կեսը հանդես է գալիս որպես Հայաստանի բաբելոնական անվանում⁷: Սրանք մեկ անգամ ևս ցույց են տալիս Արատտա-Արարատ-Ուրարտու՝ և Արման(ի/ու)-Արմի/ե-Արմինա-Արմենիա անունների (և դրանց տարբերակների) հասարժերությունը, որը պարզել էինք նաև Մուրուր-Մուրարտուի միջոցով: «Երջինս Ք. ա. 9-7-րդ դարերում կիրառվում է ավելի փոքր տարածքի նկատմամբ (քան 3-2-րդ հազարամյակներում) Շուրբիա (Շուրբե) տարբերակով: Կյուսից հետո Ս/Շուրուր-Ս/Շուրարտու, Շուրբիա երկրանունը դուրս է մղվում գործածությունից, ըստ երևույթի, տեղը մեկրնդիշտ զիջելով Արմենիա համարվեքին»:

ՍՄՐՐՐԻՐ-ՀԱՅՍԻ-ՀԱՅՍԱՍ-ՀԱՅՍԷ: Ըստ միջագետքյան հնագույն բնագրերի Մուրուր-Մուրարտու երկրանվանը համարվեք հանդես եկող մյուս տեղանունն է «Հայա» (H.A.): Շումերա-արարական մի շարք երկրերում բնագրերում շումերերենի H.A.-ին արտղերենում փոխարինում է Մուրուր երկրանունը⁸, ինչը ցույց է տալիս դրանց՝ միևնույն երկրին վերաբերելը: «Հայա» հիմքով ցեղանուն և տեղանուններ են հիշատակվում Էբրայի, Աշուրի, Խեթական տերության Ք.ա. 3-2-րդ հազարամյակներով քվագրվող քաղաքի վ բնագրերում⁹, որոնք ակնառու են դարձնում Հայա-Հայասայի (և Մուրուր-Մուրարտուի) կապը Հայք-Հայաստանի հետ:

Արատտա-Մուրուր, Մուրուր-Արման(ի/ու), Մուրուր-Հայա, Արատտա-Արարատ-Ուրարտու-Արմենիա-Հայաստան նույնությունները գալիս են լրացնելու և ամբողջացնելու մեր պատկերացումները հայոց ծագումնաբանության մի շարք շրտաբանված խնդիրների վերաբերյալ: Ամփոփելով ասվածը տեսնում ենք, որ Հայաստանին տրված հնագույն անվանումները Արատտա-Արարատ-Ուրարտու, Ս/Շուրուր-Ս/Շուրարտու-Շուրբիա, Արման(ի/ու)-Արմի/ե-Արմինա-Արմենիա, Հայա-Հայասա-Հայք-Հայաստան, իրենց տարբերակներով վկայված են Ք. ա. 3-րդ հազարամյակի առաջին կեսից, երբ ըստ լեզվաբանության ավյալների՝ հայերենը դարձել էր ինքնուրույն լեզու: Վերոշարադրյալ մեր տեսակետը հիմնավորելու համար առկա են ավելի շատ փաստեր, քան ներկայացվեքին այս բաժնում: Նշվածներից բացի, ինն առաջավորասիական սկզբնաղբյուրներում Հայաստանը

¹Gelb, 1944, p. 103, 107.

²Ջահուկյան, 1987, էջ 287-288:

³Ինդիզեան, 1947, էջ 7-8:

⁴Gelb, 1944, p. 21-22, 86, 98; Аветисян, 1984, с. 25.

⁵Дьяконов, 1952, N 2, с. 322.

⁶Նարանդյան, 1964, էջ 8, 14-15:

⁷Дандамаев, 1990, с. 102-106.

⁸Gelb, 1944, p. 31, 94-97:

⁹Տես «Ժողովագրալ քնտրյալները տարբ օրինաց երկրում, Հայա աստծո որդիները» բաժնում:

հայտնի է այլ ընդհանրական անուններով ևս՝ Կուտի(ում), Նախրի, Թուրգոմա տուն, Էարդու: Դրանց բոլորի վերաբերյալ փաստերի ամբողջությունը պետք է դառնա հատուկ քննության առարկա: Այստեղ մեկ անգամ ևս ընդգծենք, որ համեմատական լեզվաբանության տվյալները համահունչ են հնագույն գրավոր աղբյուրների հայտնություններին, և միասին հավաստում են Բ. ա. 3-րդ հազարամյակի առաջին կեսից մեր լեռնաշխարհում հայալեզու և հայանուն էթնոսի առկայությունն ու կարևոր դերը:

Բ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶՐՀԵԳԵԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՎԱԿԱՆ ԱՎԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԸ ԵՎ «ՄԱՍԻՍ» ԼԵՈՆԱՆՎԱՆ ՎԱԳԱԳՈՒՅՆ ՀԻՇԱՍԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ

Ամենակործան համաշխարհային ջրհեղեղի և մարդկության վերածննդի մասին ավանդություններ են պահպանել երկրագնդի բազմաթիվ ժողովուրդներ: Դրանց մեջ ուրույն խումբ են կազմում առաջավորասիական ծագում ունեցողները, որոնք մարդկության փրկությունն ու վերապրումը կապում են Հայկական լեռնաշխարհի հետ: Ընդ որում, դրանց մի մասում, իբրև փրկության վայր նշվում է Հայաստանն ընդհանրապես, մյուսում, ավելի մասնավորեցմամբ, Կորդվաց լեռների շրջանը կամ Մեծ Մասիսը¹:

Մասնագիտական շրջանակներում իշխում է այն կարծիքը, որ ջրհեղեղի ավանդագրությունը Աստվածաշնչի քարոզչության շնորհիվ միջնադարում է տարածվել հայ իրականության մեջ և Մեծ Մասիսն, իբրև տապանակիր լեռ, մտել է վիպական ավանդություն քրիստոնեական Հայաստանում: Նշվածից բացի, այտահայտվել է տեսակետ, որի համաձայն Մեծ Մասիսը տապանակիր լեռ է համարվել դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում: Վերջինիս գլխավոր փաստարկը Բ. ա. I դ. հույն մատենագիր Նիկողայոս Դամասկոսցու տեղեկությունն է՝ պահպանված Հովսեփոս «Հրեական հնախոսության» էջերում, որն ամբողջությամբ ներկայացնում ենք ստորև.

«Մինիաս երկրից վերև Հայաստանում կա մի խոշոր լեռ՝ Բարիս անունով, որտեղ, պատմության համաձայն, շատերն ապաստանելով փրկություն են գտել ջրհեղեղի ժամանակ, իսկ մեկը տապանի վրա տարվելով, իջել է գագաթին, և տախտակների մնացորդները երկար ժամանակ պահպանվել են: Սա, հավանաբար, այն մարդն է, որի մասին գրել է Մովսեսը՝ հրեաների օրենսդիրը»²:

Տեղեկությունն առիք է տվել տարբեր մեկնաբանությունների: Մ. Չամչյանցը գտնում է, որ «Բարիսի» փոխարեն պետք է լինեն «Մասիս»³: Ֆ. Մուրադը Մինիաս երկիրը նույնացնում է Աստվածաշնչի Միննի (սեպագիր աղբյուրներում՝ Մանա) երկրի հետ, իսկ Բարիս լեռնանունը համարում Մա-

¹Վեբեր, 1901, էջ 1-77; Ինգլիզեան, 1947, էջ 5-106:

²Հովսեփոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, էջ 55:

³Չամչյանց, 1785 (1985), էջ 150:

սիսի «բարձր» մակդիրը (հմմտ. գեոդերեն *բարեգ* «բարձրաբյուն»), որը կարող էր լայն տարածում գտնել Հայաստանից դուրս՝ պարսիկների միջնորդությամբ⁴:

Վ. Ինգլիզյանը քննադատում է Ֆ. Մուրադի տեսությունը՝ գտնելով, որ Բ. ա. 6-րդ դարում վերացած երկրի անունը չէր կարող հիշատակվել Բ. ա. I դարում հայրող հեղինակի կողմից և մատնանշում, որ «բարձր» մակդիրը «Մասիս» իմաստով ոչ մի անգամ առանձին չի գործածվել հայ մատենագրության մեջ⁵: Ընդունելով Վ. Ինգլիզյանի առարկությունը՝ կապված «բարձր» մակդիրը որպես լեռնանուն գործածվելու հետ, չի կարելի համաձայնել նրա առաջին մտքին: Հայտնի է, որ Նիկողայոս Դամասկոսցին եղել է Հռոմի կայսր Օգոստոս Օկտավիանոսի և հրեից արքա Հերովդես Մեծի մտերիներ, ինչը նրան պետք է ապահովեր առկա սկզբնաղբյուրներից օգտվելու անսահմանափակ հնարավորությամբ, որի արգասիքն է նրա 144 գրքից բաղկացած «Ընդհանուր պատմությունը»⁶: Այդ սկզբնաղբյուրների բնույթը պետք է լինեին սեպագիր և հիերոգլիֆ դիվաններից հունարենի քարգմանված հնագույն հիշատակարաններ (ինչպիսիք են, օրինակ, Բերոսոսի և Մանեթոնի կոթողային աշխատանքները), որոնցում կարող էր հիշատակվել Միննի/Մանա երկիրը:

Յ. Մարքվարը հնարավոր է համարում Բարիս լեռնանվան կապը հունական-եգիպտական *բարիս*- «նավ, մակույկ» բառի հետ՝ լեռը նույնացնելով Սյուփանի կամ Նեխ-Մասիքի հետ⁷:

Հ. Սանդալճյանը Բարիս լեռնանունը նույն «նավ» իմաստով մեկնաբանում է «ուրարտա-հունական գավառաբարբառի» և հունարենի տվյալներով, այն կապում Մեծ Մասիսի հետ՝ վերջինս նույնացնելով Ատրեստանի Սարգոն Բ արքայի Բ. ա. 714 թ. արշավանքի ընթացքում հիշատակված Ռատուշ լեռան հետ (այն հաղթահարելուց հետո ասորական զորքը մտնում է Բարի երկիր, որի անունը Հ. Սանդալճյանը կապում է քննարկվող լեռնանվանը)⁸: Սանդալճյանի տեսակետը չի դիմանում քննադատության այն պարզ պատճառով, որ Ռատուշ լեռն ու Բարի երկիրը գտնվել են Ռուսիո լճի արևելյան շրջաններում և տեղագրորեն չեն համապատասխանում Մեծ Մասիսին ու հարակից տարածքներին⁹:

Ինչ վերաբերում է լեռնանունը «նավ, մակույկ» իմաստով օտարալեզու բառի հետ կապելուն, ապա դա ևս (ինչպես Ֆ. Մուրադի առաջարկված «բարձր» մակդիրը) անհավանական պետք է համարել: Հատկանշելի է, որ երբևէ Բարիս անվամբ որևէ լեռ չի հիշատակվում Հայկական լեռնաշխար-

⁴Ըստ Ինգլիզեան, 1947, էջ 27-29:

⁵Ինգլիզեան, 1947, էջ 28-29:

⁶Կրկյաշարյան Ս. Մ., Հովսեփոս Փլավիոսը և նրա աշխատությունները (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 9, Ե., 1976), էջ 18:

⁷Ըստ Ինգլիզեան, 1947, էջ 29-32; Арутюнян, 1985, с. 54, 195, 213-214.

⁸Ըստ Ինգլիզեան, 1947, էջ 32-34:

⁹Հմմտ. Ինգլիզեան, 1947, էջ 34-35:

հում: Աղլայիսի նշանավոր մի լեռնանուն հազիվ թե իսպառ մոռացության մատնվեր, ուստի մնում է ենթադրել, որ այն կարող էր աղավաղված լինել նախքան Ն. Դամասկոսցու աշխատություն մուտք գործելը: Ե՞րբ և ինչպե՞ս կարող էր տեղի ունենալ նման աղավաղումը (եթե այն եղել է):

Այն հանգամանքը, որ փրկարար լեռան տեղը կողմնորոշվում է Մինիաս երկրի օգնությամբ, որ փրկարար լեռան տեղը կողմնորոշվում է Մինիաս (Միննի/Մանա) թագավորությունը դադարում է գոյություն ունենալուց և մեկընդմիջ տ հեռանում պատմության թատերաբեմից՝ վերջին անգամ հիշվելով Ք.ա. 6-րդ դարի սկզբին (Երեմիա, 51, 27): Դա նշանակում է, որ մեզ հետաքրքրող սկզբնաղբյուրն, ամենայն հավանականությամբ, եղել է սեպագիր (նման ենթադրության հիմք է տալիս նաև ջրիեղեղի մասին գրի առնված առաջավորասիական բնագրերի սեպագիր լինելը):

Ինչպե՞ս պետք է գրվեր մեզ հետաքրքրող լեռնանունը սեպագրության օրինաչափությունների համաձայն: Հնարավոր էին գրության առավել հավանական *Bar-is*, *Ba-ri-is*, *Ba-ar-is* և այլ տարբերակներ (նկ. 7), որոնցից ամենանպատակահարմարը և՛ տեղի տնտեսման (համառոտության), և՛ հրնչյունների անհարկի կրկնություն չառաջացնելու, և՛ նշանների պարզության առումով *Bar-is* երկվանկ (նկ. 7ա) ձևն էր: Այս պարզաբանումից հետո նկատելի է դառնում վերոենթադրյալ հնարավոր աղավաղումը: Բանն այն է, որ սեպագրերում լայն տարածում ունեցող բազմանշանակությունը և *bar* վանկն ընթերցվում էր նաև *mas*, *mas*, *par*¹: Ի դեպ, հենց դա է պատճառը, որ այսօր չգիտենք, թե ինչպես է հնչել Վանի թագավորության (Բիսյանիի, Ուրարտու) գերագույն աստված Խալդիի տիկնոջ ասորեստանյան աղբյուրներում պահպանված անունը՝ *Bag-bar-tu*, *Bag-mas/s-tu*, թե՞ *Bag-par-tu*, կամ ինչպես է հնչել Ուր(ու)ատրի միավորման ութ երկրներից մեկի անունը՝ *Bar-gun*, *Par-gun*, *Mas-gun*, թե՞ *Mas-gun*: Սեպագրից հունարենի թարգմանվելուց, եթե դպիր չգիտեր լեռան ճշգրիտ անունը, կարող էր տեղի ունենալ վրիպակ, որի հետևանքով լեռնանունը հունարեն թարգմանության մեջ տեղ կգտներ ընթերցման ցանկացած այլ տարբերակով: Մի կողմից Դամասկոսցու երկում տապանակիր «խոշոր լեռան» ներկայանալը «Մինիաս երկրից վերև», այսինքն՝ Ուրմիտ լճի ավազանից հյուսիս (ինչը համապատասխանում է Մեծ Մասիսին), մյուս կողմից նույն սեպանշանների ինչպես *Bar-is*, այնպես էլ *Mas-is* ընթերցման հնարավորությունը, և երրորդ կողմից էլ Մեծ Մասիսի տապանակիր լեռ լինելը հայկական ավանդության մեջ թույլ են տալիս եզրակացնելու, որ նախնական սեպագիր սկզբնաղբյուրում լեռնանունը եղել է *Mas-is*²: Իսկ դա նշանակում է, որ ջրիեղեղի մասին հայկական ավանդությունը գոյություն է ունեցել Ք.ա. 6-րդ դարասկզբից առաջ, հայտնի է եղել Հայաստանի սահմաններից դուրս և գրի առնվել սե-

¹Labat. 1988, p. 68-71; Borger. 1978, S. 75-76; Липин, 1957, с. 14.

²Լեռնանվան գրության *Mas-is* ձևը ամենանպատակահարմարն է բոլոր հնարավոր տարբերակներից (տես նկ. 8):

պագիր դպրության կենտրոններից մեկում¹: Հետագայում, հավանաբար հելլենիստական դարաշրջանում, ավանդությունը սեպագիր սկզբնաղբյուրից թարգմանվել է հունարենի, որի ընթացքում էլ նույնիմաստ սեպանշանների խումբը *Masis* ընթերցման փոխարեն տեղ է գտել *Baris* տարբերակով: Նիկողայոս Դամասկոսցու օգտագործած աղբյուրում լեռնանունն արդեն պետք է լիներ աղավաղված և այդ տեսքով էլ մուտք գործեր նրա «Ընդհանուր պատմության» մեջ:

Որ ջրիեղեղի մասին հայկական ավանդությունը չի ստեղծվել Աստվածաշնչի քարոզչության հետևանքով, կարող է վկայվել այլ փաստով ևս: Հովսեպոս Փլավիոսի հիշյալ երկում պահպանված տեղեկության համաձայն՝ Նոքոսը (ինս՝ Նոյը) «իր գերդաստանով դուրս գալով, Աստծուն գուհեր մատուցեց և խնջույք արեց ընտանիքի անդամների հետ: Հայերը մինչ օրս այդ վայրը կոչում են իջնելու տեղ»²... Առաջին դարում հրեա հեղինակի գրի առած այս գրույցը գրեթե նույնանուն է Նախիջևանի՝ որպես Նոյի առաջին իջևանի մասին հայկական ավանդությանը³:

ա)	𐎠	𐎠	𐎠	Bar - is
բ)	𐎠𐎠	𐎠𐎠	𐎠	Ba - ri - is
գ)	𐎠𐎠	𐎠𐎠𐎠	𐎠	Ba - ar - is
դ)	𐎠𐎠	𐎠𐎠	𐎠	Ba - ar - is

Նկար 7

ա)	𐎠	𐎠	𐎠	Mas - is
բ)	𐎠	𐎠𐎠	𐎠	Ma - si - is
գ)	𐎠	𐎠	𐎠	Ma - as - is
դ)	𐎠	𐎠	𐎠	Ma - as - is

Նկար 8

Ամփոփելով այս համառոտ հաղորդումը՝ տեսնում ենք, որ Նիկողայոս Դամասկոսցու «Ընդհանուր պատմության» մեջ տապանակիր լեռան անունն աղավաղված է, և սեպագրագիտական քննությամբ հանրավոր է դառնում վերականգնել նախնական ճիշտ տեսքը՝ *Masis*: Դրա շնորհիվ պարզաբանվում է, որ ջրիեղեղի մասին հայկական ավանդությունը (որում Մեծ Մասիսն է տապանակիր լեռը) չի ստեղծվել Հայաստանում քրիստո-

¹Մենք սա համարում ենք «Մասիս» լեռնանվան վաղագույն հիշատակությունը, քանի որ Մասիս լեռնաշղթան Ալեքսանդրի վեպում (գրի առնված Ք.ա. 240 թ.) և Մաշտի լեռները «Գիլգամեշ» էպոսում վերաբերել են ոչ թե Մեծ Մասիսին, այլ Հայաստանի հարավը եզերող Մասիոս / Մասիոն լեռներին (տես էջ 13, ծմբ.1):

²Հովսեպոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, էջ 54:

³Ղանաճառյան, 1969, էջ 11, 157, 169, 333, 417:

նեության տարածման հետևանքով, այլ հայտնի է եղել դրանից դարեր առաջ և դուրս գալով հայ իրականության սահմաններից Ք.ա. 6-րդ դարասկզբից ոչ ուշ գրի է առնվել սեպագիր դպրության կենտրոններից մեկում: Հետագայում սեպագրից հունարենի թարգմանվելու ընթացքում տեղի է ունեցել գրագրական վրիպակ, ավանդությունը լեռնանվան աղավաղմամբ տեղ է գտել Ն. Դամասկոսցու երկում և մեզ հասել Հովսեպոս Փլավիոսի «Հրեական հնախոսության» էջերում: Քրիստոնյա Հայաստանում տեղի է ունեցել բնիկ (նախաքրիստոնեական) հայկական և աստվածաշնչյան ավանդազրույցների միաձուլում, որը համեմվելով տեղական բանահյուսության դրվագներով՝ ծնունդ է տվել նոր գեղեցկապատում մի ավանդության՝ Վերջինիս համակողմանի (հատկապես՝ ժամանակագրական շերտերի) ուսումնասիրությունը մնում է հետագայի խնդիր:

Նոյի և ջրհեղեղի մասին հայկական գրույցները տես Դանանալյան, 1969, էջ 11-12, 20, 24, 26, 29, 54, 123, 157, 164, 169, 332-336, 414:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՌՈՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՆԿ

Աբրահամյան Ա., Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Ե., 1956
 Ալիշան Գ., Հայաստան յառաջ քան զինչև Հայաստան, Վենետիկ, 1904
 Անտոյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. I-IV, Ե., 1971-1979
 Անանիա Շիրակացի, Մատենագրություն (թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Գ. Աբրահամյանի և Գ.Բ. Պետրոսյանի), Ե., 1979
 Աստուածաշունչ մատենան Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1860 (արևելահայերեն թարգմանությունը՝ Էջմիածին, 1994)
 Ավետիսյան Պ., Բորոխյան Ա., Տիգրիսի և Եփրատի ակունքներն ըստ Աստվածաշնչի, «Աստվածաշնչական Հայաստան» միջազգային գիտաժողովի գեկուցումների դրույթներ, Օշազան, 1999
 Բորոխյան Ա., Հայաստանյան Տուգրիչ պետությունը Հին Արևելքում, «Գարուն», 1993, 5-6 հիվազանեչ, Հին Արևելքի դյուցագնավեպ (թարգմ. Ն. Մարտիրոսյանի) Ե., 1973
 Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր (աշխատասիր. Ա.Քյոշկեյլյանի), Ե., 1981
 Եսայան Ս.Գ., Նորից «Վիշապ» կորոզմորի մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1985, N 2
 Եվսեբի Պամփիլեայ Կեսարացույ Ժամանակակնք երկնամենայ, Վենետիկ, 1818
 Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963
 Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1985
 Ինգլիզեան Վ., Հայաստան Սուրբ Գրքի մեջ, Վիեննա, 1947
 Ինճիհեան Լ., Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. I, Վենետիկ, 1835
 Լարոբենայ դիւանագիր դպրի Եղեսիոյ Թուրք Աբգարու (յեղլայ յատրոյն ի ձեռն Ս. Թարգմանչաց), Վենետիկ, 1868
 Խալաթյան Գր., Ջենոբ Գլակ, համեմատական ուսումնասիրութիւն, Վիեննա, 1893
 Խանգաղյան Է.Վ., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Ե., 1967
 Խաչիկյան Լ., Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», Ե., 1992
 ՀԱ - «Հանդես Ամսօրեայ», Վիեննա
 ՀԺՊ - Հայ Ժողովրդի պատմություն (ԳԱ հրատ.), հ. I, Ե., 1971
 Հեթում Պատմիչ (Պատմութիւն) թարարաց (յեղեպ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն հ. Մ. Ալգերեան), Վենետիկ, 1842
 Հմայակյան Ս. Գ., Կուռա-Կուտա աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում, «Պատմա-բանասիրական հանդես», 1990, N 1
 ՀՀՇՏԲ - Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախչյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1-4, Ե., 1986-1998
 Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն(աշխատ. Վ.Վարդանյանի), Ե., 1989
 Հովսեպոս Փլավիոս, Ընդդեմ Ապիոնի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 9, Հին հունական աղբյուրներ, Ա, Ե., 1976
 ՀԱՊ - Հին Արևելքի պոեզիա, Ե., 1982
 Հովսեպոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 9, Հին հունական աղբյուրներ, Ա, Ե., 1976
 Դանանալյան Ա., Ավանդապատում, Ե., 1969
 Դավանցյան Գր., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Ե., 1944
 Դուրան (թարգմ. արաբերենից Ա.Ամիրխանյանի), Վառնա, 1909
 Մատթեոսեան Վ., Հնագոյն պետութիւնը Հայաստանում, Արատա: Հեղինակ Արտակ Մովսիսյան (գրախոսական), «Ինքնավեր», 1993, N 1-4
 Մատթեոսեան Վ., Սեպագիր աղբյուրներու Արման երկիրը, ՀԱ, 1994, N 1-12
 Մատթեոսեան Վ., Մումերական աղբյուրներու Արատա երկիրը եւ Հայկական լեռնաշխարհը, ՀԱ, 1995, N 1-12
 Մարտիրոսյան Հ., Արգոնավորդների արշավանքը և Հայաստանը, «Հայոց պատմության և մշակույթի հարցեր» գիտական նստաշրջանի գեկուցումների հիմնադրույթներ, Ե., 1997

Մարտիրոսյան Հ., Աշխարհարարման աստվածաշնչյան առասպելի ակունքները և Հայաստանը, «Աստվածաշնչական Հայաստան» միջազգային գիտաժողովի նյութեր, Օշական, 2000 (հրատարակության ընթացքում)

Մեծին Վարդանայ Բարձրբերդույ Պատմություն Տիեզերական, Մոսկվա, 1861

Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն Ստ. Մալխասյանցի), Ե., 1981

Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց (աշխատութեամբ Մ.Աբեղեան և Ս.Յարությունեան), Տփլիս, 1913

Մովսիսյան Ա., Հնագույն պետությունը Հայաստանում, Արատտա, Ե., 1992

Մովսիսյան Ա., Արմանի-Արմի երկիրն ըստ արալական և էրլայական աղբյուրների (Պատմա-աշխարհագրական ակնարկ), «Հայկական հայագիտական հանդես», Պեյրոս, 1993, ԺԳ

Մովսիսյան Ա., Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը. Հարյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ, Ե. 1997

Նալբանդյան Գ., Դարեհ Վչնասպի Բիսերունյան արձանագրությունը, Ե., 1964

Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. Ա, (Վենետիկ, 1785), Ե., 1985

Պետրոսյան Ա., Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգաձագման խնդիրը, Ե., 1997

Պետրոսյան Ե., Հայ եկեղեցու պատմություն, մաս Ա, Էջմիածին 1990

Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987

Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս (համահավաք բնագիրը Մ. Աբեղյանի, Գ. Աբովի, Ա. Ղանալանյանի, Հ. Օրբելու), Ե., 1939

Սասունցի Դավիթ (կազմողներ՝ Գր. Գրիգորյան, Ա. Շահումյան, Ա. Բաղայան), Ե., 1993

Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1-2, Ե., 1978-1982

Վեբեր Ս., Արարատը Սուրբ Գրոց մեջ, Վիեննա, 1901

Փաստոսի Բիզանդացույ Պատմություն Հայոց (տպագրությունը՝ Բ. Պատկանյանի 1886 թվի հրատարակությունից), Թիֆլիս, 1912

Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն Ստ. Մալխասյանցի), Ե., 1968

Փրիլպոսյան Ա., Քամայան Հ., Շումերա-արալական տիեզերաստեղծ Էնկի-Հայա աստծու և հայոց ազգածին Հայկ նահապետի համադրության փորձ, «Հայ ժողովրդական մշակույթ» հանրապետական IX գիտական նստաշրջանի գեկուցումների հիմնադրույթներ, Ե., 1997

ANET - Ancient Near Eastern Texts Related to the Old Testament (ed. By J.B.Pritchard), New Jersey, 1969

AD - The Assyrian Dictionary of the Oriental Institute of the University of Chicago, Chicago

Astour M.C., The Date of the Destruction of Palace G at Ebla, "Bibliotheca Mesopotamica", vol. 25, Malibu, 1992

Barton G.A., The Royal Inscriptions of Sumer and Akkad, New Hawen, 1929

Berlin A., Enmerkar and Enshukésdanna, Philadelphia, 1979

Berlin A., Ethnopoetry and the Enmerkar epics, "Journal of the American Oriental Society" 1983, vol. 103, 1

Cohen S., Enmerkar and the Lord of Aratta, Ann Arbor, 1973

Cornwall P. B., On the Location of Dilmun, "Bulletin of the American School of Oriental Research", N 103, 1946

van Dijk J., LUGAL UD ME-LAM-bi NIR-GAL: Le Recit epique et didactique des Travaux de Ninurta, du Deluge et de la Nouvelle Creation, 2 vols., Leiden, 1983

ETCSL - The Electronic Text Corpus of Sumerian Literature: Composite Text, Translation, Bibliography (Home page in INTERNET, Faculty of Oriental Studies, University of Oxford. Written by E. Robson. Updated on 25.II.2000)

Finkelstein J.J., Subartu and Subarians in Old Babylonian Sources, JSC, 1955, vol. IX, 1

Gelb I.J., Hurrians and Subarians, Chicago, 1944

Hirsch H., Die Inschriften der Könige von Agade, "Archiv für Orientforschung", 1963, 20, S. 1-82

Klengel H., Lullubum, "Mitteilungen der Institut für Orientforschung", 1966, Bd. XI

Kramer S. N., Enmerkar and the Lord of Aratta, Philadelphia, 1952

Kramer S. N., From the Tablets of Sumer, Indian Hills, Falcon, 1956

Kramer S. N., Sumerian Mythology, New York, 1961

Kramer S.N., The Sumerians, Chicago, 1963(a)

Kramer S. N., Dilmun: Quest for Paradise, "Antiquity", XXXVII, 1963(b)

Labat R., Manuel d'Epigraphie akkadienne, Paris, 1988

Lambert W. G., Nisir or Nimuš, "Revue d'Assyriologie et d'Archeologie Orientale", 1986, vol. LXXX, N 2

Lehmann-Haupt C.F., Armenien Einst und Jetzt, Berlin-Leipzig, I-II, 1910-1931

Lehmann-Haupt C.F., Die älteste Kunde über Armenien, ՀԱ, 1927, N 11-12

Lipinski E., El's abode: Mythological traditions related to mount Hermon and to the mountains of Armenia, "Orientalia Lovaniensia Periodica", 1971, N 2

Lloyd S., The Archaeology of Mesopotamia, London, 1978

Komoroczy G., Das mythische Goldland Harali im Alten Vorderasien, "Acta Orientalia Academiae Scientiarum Hungaricae", Tomus XXVI (1), 1972

MM - Myths from Mesopotamia, Creation, The Flood, Gilgamesh and Others (A new translation by St. Dalley), London, 1989

Schnabel P., Berosos und die babylonisch-hellenistische Literatur, Leipzig-Berlin, 1923

Sollberger E., Kupper J.-R., Inscriptions Royales Sumeriennes et Akkadiennes, Paris, 1971

Австисян Г., Государство Митанни, Е., 1984

Барпкян Р.М., Еретики Ареворди ("сыны солнца") в Армении и Месопотамии и послание армянского католикоса Нерсеса Благодатного, "Эллинистический Ближний Восток, Византия и Иран" (св. в честь Н.В.Игнатьевской), М., 1967

Беріаншвілі М.Т., Древо жизни, "Кавказ в системе палеометаллических культур Евразии" (Материалы I симпозиума - "Кавказ и юго-восточная Европа в эпоху раннего металла"), Тб., 1987

Гамкрелдзе Т.В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы, т. 1-2, Тб., 1981

Бибби Дж., В поисках Дильмуна, М, 1984

Дандамас М.А., Клянонские данные об армянах, "Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей", Е., 1990

Джаукян Г.Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Е., 1967

Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, N 2-4

Иванов Вяч. Вс., Хеттский язык, "Древние языки Малого Азии" (св. статей), М., 1980

ИДВ - История Древнего Востока, ч.1, Месопотамия, М., 1983

Канева И. Т., Шумерский героический эпос как исторический источник, ВДИ, 1964, N 4

Кифинини А., Географические воззрения древних шумеров при Натеси Гулса, "Палеостипский сборник", вып. 13 (76), Л., 1965

Комороци Г., Гимн о торговле Тильмуна (Иггерноляция в тексте шумерского мифологического эпоса "Энки и Иншурсаг"), "Древний Восток", 2, Е., 1976

Крамср С. Н., История начинается в Шумере, М., 1965

Липини Л.А., Аккадский (вавилонско-ассирийский) язык, вып. 1, Л., 1957

ЛУН - Луна, унаиная с неба. Древняя литература Малой Азии (пер. и коммент. Вяч. Вс. Иванова), М., 1977

Мифология древнего мира (пер. с англ.), М., 1977

МНМ - Мифы народов мира, Энциклопедия, т. 1-2, М., 1991-2

ШДВ - Поэзия и проза Древнего Востока, М., 1973

Тураев Б.А., Классический Восток, т. 1, Л., 1924

Фрезер Дж. Дж., Фольклор в Ветхом Завете, М., 1985

Пириков О.С., Место армянского языка среди индоевропейских и проблема армянской цароидии, «Լրիւրիք հիւսիսայնական գիտությունների», 1980, N 5

Шифман И. Ш., Культура древнего Угарита (XIV-XIII вв.), М., 1987

ЯОТСС - Я открою тебе сокровенное слово. Литература Вавилонии и Ассирии, М., 1981

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան	3
Աստվածների մոտ՝ Հայաստան	4
Արարչագործության կենտրոնը	5
Արևի երկիրը	12
Կաճառն աստվածների	14
Ոսկեբեր երկիրը Հարալի	17
«Աստծո պատկերով ու նմանությամբ»	19
Շումերական դրախտի առեղծվածը	24
Անդրաշխարհը	27
«Երբ ջրհեղեղը սրբեց ամեն բան»	28
Անմահության որոնումներում. Հայոց երկրի ճանապարհը	32
Երկիրն իմաստության	35
Բարեպաշտ ընտրյալները սուրբ օրինաց երկրում. Հայա աստծո որդիները ...	36
Վերջաբանի փոխարեն	38
<i>Հավելված</i>	
Ա. Հայաստանի հնագույն անվանումները և հայոց ծագումնաբանության խնդիրը	40
Բ. Համաշխարհային ջրհեղեղի մասին հայկական ավանդությունը և «Մասիս» լեռնանվան վաղագույն հիշատակությունը	48
Օգտագործված գրականության և համառոտագրությունների ցանկ	53

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍՐԲԱԶԱՆ

ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ.

*ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՄԻԱՅԻ
ՀՆԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ*